Հավելված N 10
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 6-ի նիստի N 29
արձանագրային որոշման

Ռ Ա Ձ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....2
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ....3
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ....3
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ....5
I. ՆԱԽԱԲԱՆ....6
II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ....8
II.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....9
III. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....10
3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ....10
3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ....12
3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ....15
3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ....16
3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ....19
3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ....21
3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ....25
3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ....26
3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ....31
3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ....33
3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....35
3.12 ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ....38
3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ....43
IV. ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)....44
V.ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ....49
5.1 ՏԵՍԼԱԿԱՆ....49
5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ....49
5.3.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ....51
VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ....52
VII.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ....58
VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ....61
IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ և ԳՆԱՀԱՏՈՒՄ....63
X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ....66
ՀԱՎԵԼՎԱԾ 1....67

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. ՀՀ Տավուշի մարզի ծնունդներ և մահացություններ, 2010-2015 թթ. 14
Գծապատկեր 2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնափոխադրումների և բեռնաշրջանառության ծավալը.....17
Գծապատկեր 3. Հայաստանի ՀՆԱ 22
Գծապատկեր 4. Արդյունաբերական արտադրանքի ծավալը և համեմատականները.....26
Գծապատկեր 5. Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը և համեմատականները.....27
Գծապատկեր 6. Շինարարություն/ընթացիկ գներ մլն.դրամ/ 27
Գծապատկեր 7. Մանրածախ առևտրի շրջանառությունը, ...27
Գծապատկեր 8. Ծառայությունների ծավալը.....28
Գծապատկեր 9. Արտահանում.....28
Գծապատկեր 10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի կառուցվածքը....40

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Մշտական բնակչության սեռա-տարիքային բաշխումը, 2016թ.հունվարի 1-ի դրությամբ.....12
Աղյուսակ 2. Մշտական բնակչության թվաքանակը, 01/01 դրությամբ 12
Աղյուսակ 3. Մշտական բնակչության թվաքանակը ՀՀ բնակչության նկատմամբ 14
Աղյուսակ 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնափոխադրումների և բեռնաշրջանառության ծավալը 16
Աղյուսակ 5. Ընդհանուր ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ծավալը 17
Աղյուսակ 6. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն, 2015թ. .. 18
Աղյուսակ 7. ՀՀ Տավուշի մարզի քաղաքային համայնքների հասանելիությունը 18
Աղյուսակ 8. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը 19
Աղյուսակ 9. Մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վիճակը.....20
Աղյուսակ 10. ՀՀ Տավուշի մարզի ՀՆԱ-ի դինամիկա, 2013- 2015 թթ,.....21
Աղյուսակ 11. ՀՀ-ում, Տավուշի և Լոռու մարզերում միջին ամսական անվանական աշխատավարձը ըստ տնտեսության հատվածների (2013-2015թթ.) 22
Աղյուսակ 12. Մարզի ընտանեկան եկամուտների աղբյուրների համեմատականը, 2015 թ 24
Աղյուսակ 13. ՀՀ Տավուշի մարզի զբաղվածություն ապահովող հիմնական ճյուղերը, բացի գյուղատնտեսության 24
Աղյուսակ 14. Տնտեսապես ակտիվ բնակչության քանակը.....25
Աղյուսակ 15. ՀՀ Տավուշի մարզի զբաղվածության կենտրոններում հաշվառված գործազուրկներ, (2016թ.) 25
Աղյուսակ 16. Գործազրկության մակարդակ, % 26
Աղյուսակ 17. Մարզում գրանցված խոշոր գործատուների մասին 29
Աղյուսակ 18. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքային տարածություններն, 2016թ. հունվար-դեկտեմբեր.....30

Աղյուսակ 19. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքն, 2016թ. հունվար-դեկտեմբեր 30
Աղյուսակ 20. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը 31
Աղյուսակ 21. Անասնաբուծական արտադրանքի արտադրությունը[1] հանրապետությունում, 2016թ. հունվար-դեկտեմբեր 31
Աղյուսակ 22. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016. հունվարի 1-ի դրությամբ,.....33
Աղյուսակ 23. Թանգարանների և գրադարանների այցելուների վերաբերյալ.....34
Աղյուսակ 24. Մարզի մշակութային օբյեկտները, քանակները և գտնվելու վայրերը:.....34
Աղյուսակ 25. Մթնոլորտային տեսակարար արտանետումները 36
Աղյուսակ 26. Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն (SWOT) 44
Աղյուսակ 27. ՀՀ Տավուշի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ. 49
Աղյուսակ 28. Տավուշի մարզի գերակայություններ 52
Աղյուսակ 29. Տավուշի մարզի ռազմավարական ծրագրեր.....58
Աղյուսակ 30. ՀՀ Տավուշի ՄՌ հիմնական ռիսկերը և նվազեցման ուղիները 63

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԳԾ	Տարածքային զարգացման գործառնական ծրագիր
ՏԶԳՊ	Տարածքային զարգացման գործողությունների պլան
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ / Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԹԿՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԵՊՀԻՄ	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՄԶՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն

Ի. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի ուղերձը մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության կապակցությամբ

Արդեն սեղանին է ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը: Սա փաստաթուղթ է, որը և՛ ուղենիշ է առաջիկա տարիների աշխատանքային գործունեության համար և՛ միևնույն ժամանակ իր մեջ լուրջ վերլուծություններ է պարունակում մարզի տնտեսական միջավայրի ու հասարակական կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ: Այստեղ հստակ ուրվագծված են մարզի տնտեսության ռազմավարական ուղղությունները, դրանք զարգացնելու մեխանիզմները, զարգացման հեռանկարներն ու ակնկալվող արդյունքները: Իսկ երբ նպատակն առավել տեսանելի է, հայտնի է, որ շատ ավելի դյուրին է աշխատել:

ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին: Այստեղ հաշվի են առնվել բոլոր այն առաջնահերթությունները, որոնք ընդգծված են ՀՀ կառավարության ծրագրում: Վստահ կարելի է ասել, որ ՀՀ Տավուշի մարզի զարգացման ռազմավարությունը ամբողջովին համապատասխանում է մեր երկրում ընթացող բարեփոխումների տրամաբանությանը, ինչպես նաև դրա մասն է կազմում: Այն համապատասխանում է ՀՀ Նախագահի ու ՀՀ կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային մոտեցումներին ու դիրքորոշումներին, ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության և խնդրի հետ կապված այլ կարևորագույն փաստաթղթերի հիմնական դրույթներն ու գերակայությունները, ապահովելով ՀՀ Տավուշի մարզի զարգացման շարունակականությունը:

ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը հարթակ է, կապելու մարզի բոլոր ներդրողներին, շահագրգիռ կողմերին, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններին:

Ռազմավարության կազմման աշխատանքներում մեծ աջակցություն է ցուցաբերվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ԵՄ փորձագիտական խմբի կողմից, ինչպես նաև մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, որոնց դերը մեծ է ՀՀ Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում:

Ռազմավարական փաստաթղթի մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

ՀՀ Տավուշի մարզպետարանի և անձամբ իմ երախտագիտությունն եմ հայտնում ռազմավարության մշակմանն աջակցած պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններին, մարզային հանձնաժողովի անդամներին, ոլորտային աշխատանքային խմբերին և պաշտոնատար անձանց, բոլորիս մաղթում հաջողություններ ու արդյունավետ աշխատանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ԱԲՈՎՅԱՆ**

II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ճանաչել է տարածքային զարգացման կարևորությունը և այս ուղղությամբ շարունակական երկխոսություն է վարել ԵՄ-ի հետ՝ 2000թ.-ից սկսած: 2003թ.-ից սկսած, տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումն առաջնահերթ են համարվել մի շարք գերակա փաստաթղթերով, օրինակ՝ ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 994-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի <<Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 1207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշմամբ:

2. Հայաստանն այսօր բնութագրվում է որպես զարգացման մարտահրավերներով, աշխարհագրաքաղաքական սահմանափակումներով, էներգիայի արտաքին աղբյուրներից ու շուկաներից կախում ունեցող, միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր: 2008թ.-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով տեղի ունեցած բացասական գործընթացները հանգեցրել են աղքատության ու գործազրկության մակարդակների զգալի բարձրացմանը և խորացրել հասարակության խոցելի խմբերի մարգինալացումը: Արտագաղթն ու փոխանցումներն արտասահմանից միայն մասամբ են կարողանում մեղմել ստեղծված իրավիճակը:

3. Քաղաքականության տեսանկյունից հիմնական մարտահրավերներից է տարածքային զարգացման համակողմանի ռազմավարության մշակումն ու իրականացումը և 2018-2020թթ. տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրի առաջադրումը, որի մեջ կարտացոլվեն այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև առկա անհամաչափությունները մեղմելու համար:

4. Բացի այդ, անհրաժեշտ է համակողմանիորեն համապատասխանեցնել տարբեր նախարարությունների՝ տարածքային զարգացմանն առնչվող քաղաքականությունները, որոնք առաջին հերթին վերաբերում են գյուղատնտեսության ու գյուղական տարածքների զարգացմանը, տեղական ֆինանսական միջոցների կառավարմանը, տեղական ենթակառուցվածքների, տնտեսական զարգացման, զբաղվածության և մասնագիտական կրթության ոլորտներին: Միջնաժամկետ հատվածում, տարածական ու ոլորտային հեռանկարներով հանդերձ, միայն համակարգված միջամտությունը կարող է հանգեցնել տարածքների սոցիալ-տնտեսական իրական և հարատև զարգացմանը:

5. Ապացույցների վրա հիմնված և արդյունքների վրա կենտրոնացող տարածքային զարգացման քաղաքականության մշակման և առաջընթացի անխափան չափման նպատակով՝ անհրաժեշտ է ունենալ մշտադիտարկման ու գնահատման ցուցանիշների հետևողական կազմ:

6. Ամփոփելով վերոգրյալը նշենք, որ այս փաստաթուղթը՝ ՀՀ Տավուշ մարզի զարգացման 2017-2025թթ. ռազմավարությունը ՀՀ Տավուշի մարզի տարածքային զարգացման բոլոր ուղղությունները կմիավորի և հստակ ճանապարհային քարտեզ կստեղծի տարածքային զարգացման քաղաքականության համար:

II.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7. Այն տեսլականը, որ տարածքային զարգացման քաղաքականությունը ՀՀ Տավուշի մարզին տրամադրում է փոխկապակցված շարժառիթների շարք՝ ներուժերի հիման վրա մրցունակությունը բարձրացնելու և մարզի ներսում սոցիալ-տնտեսական համաչափությունը երաշխավորելու նպատակով, բավարար հենք է ստեղծում հետևյալ ռազմավարական նպատակների իրականացման համար.

1) **Մինչև 2025թ**. ՀՀ Տավուշի մարզը կբարելավի իր մրցունակությունը և տնտեսության դիվերսիֆիկացիան՝ հասնելով նվազագույնը Հայաստանի միջինի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 60%-ին, կունենա 10%-ային կետով բարձր մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդիկ, քան 2015թ., 10%-ային կետով ավելի բարձր ակտիվ կազմակերպություններ և ոչ գյուղատնտեսական աշխատատեղեր, քան 2015 թվականին:

2) **Մինչև 2025թ**. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվի գործազրկության մակարդակը՝ դառնալով 10%-ից ցածր (համեմատած 2015թ. 12.1%-ի հետ), ուշադրություն դարձնելով կանանց գործազրկությանը և աղքատության մակարդակին՝ 25-%-ից ցածր (համեմատած 2015թ. 35.3%-ի հետ): Մարզի սահմանամերձ տարածքները չեն ունենա երկարաժամկետ գործազրկության և աղքատության կրկնակի ավելի բարձր տոկոս, քան մարզային միջինը:

3) **Մինչև 2025թ**. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվեն տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը՝ մարզային և համայնքային աշխատողների 85%-ը կվերապատրաստվեն, մարզի ամբողջ տարածքը կունենա խոշորացված 6 համայնք, 2016թ.-ի 40-ի փոխարեն:

8. Տարածքային զարգացումը մարզում կկենտրոնանա մի շարք գերակայությունների վրա, որոնք են՝ ժամանակակից արդյունաբերության և զբոսաշրջության խթանում, գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում և բնապահպանություն, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում, ներդրումներ մարդկային կապիտալում և սոցիալական ենթակառուցվածքում, տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների ամրապնդում: Նշված նպատակներին զուգահեռ կսահմանվեն նաև հորիզոնական նպատակներ, ինչպես օրինակ՝ գենդերային հավասարությունը և խտրականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունն ու էներգաարդյունավետությունը, տեղեկատվական հասարակության ստեղծումը և մրցակցության պաշտպանությունը:

III. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



9. ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին, պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանի Հանրապետությանը: Մարզն ունի մոտ 350 կմ միջպետական սահման, որից 300 կմ-ը՝ Ադրբեջանի Հանրապետության, 50-ը՝ Վրաստանի հետ: Մարզի տարածքը 2 704 քառ.կմ է, որը կազմում է ՀՀ տարածքի 9.1%-ը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 110751.5 հա, կամ մարզի ընդհանուր տարածքի շուրջ 40.9%-ը: Վարելահողերի և բազմամյա տնկարկների ոռոգելի տարածքները կազմում են 6403 հա կամ 23%-ը: Չմշակվող հողերը կազմում են մոտ 7 210 հա, սահմանամերձ լինելու պատճառով: Մարզի շուրջ 4.3%-ը զբաղեցնում են բնակավայրերի, ջրային, էներգետիկայի, կապի և տրանսպորտի սպասարկման տարածքները և շուրջ 54%-ը՝ խառը անտառները (113 566.7 հա) և հատուկ պահպանվող տարածքները (33 031.6 հա), <<Դիլիջան>> Ազգային պարկ, արգելավայրեր, և այլն, որոնք կազմում են հանրապետության անտառային տարածքների 38%-ը, ընդգրկելով հիմնականում մարզի միջին և հարավային հատվածները:

10. Մարզն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի (Շամշադինի) տարածաշրջանները:

11. ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Ծովի մակերևույթից ամենացածր կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390 մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2 993 մ: Մարզի տարածքը մի մասը գտնվում է ցածրադիր գոտում (հիմնականում Բագրատաշենի տարածաշրջան), իսկ մյուս մասը միջին և բարձրադիր գոտիներում, 2 000 մ բարձրությունից ավել են գտնվում մարզի ընդհանուր տարածքի 5-10%, իսկ ցածրադիր գոտին կազմում է մարզի տարածքի մոտ 15%-ը: Մարզի հիմնական գյուղատնտեսական հողերը կազմում են վարելահողերը՝ 25 588.4 հա, արոտավայրերը՝ 63 065.6 հա ու խոտհարքները՝ 9 401.3 հա: ՀՀ Տավուշի մարզը գտնվում է 0,2-0,3g առավելագույն հորիզոնական արագացման գոտում՝ ըստ ՀՀ տարածքի սեյսմաշրջանացման քարտեզի (տես՝

http://www.nssp-gov.am/uxe5_2.htm): Հարկ է նշել 1997թ. Նոյեմբերյանի երկրաշարժը, որը մեծ վնասներ հասցրեց հատկապես Նոյեմբերյան, Կողբ, Բերդավան և Դովեղ համայնքներին:

12. Մարզը գտնվում է ՀՀ չափավոր խոնավ տարածաշրջանում: Տեղումների քանակը տարեկան հասնում է 500-600մմ-ի: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ:

13. Տավուշի մարզի համայնքները ենթակա են երկրաշարժի, կարկտահարության, ջրհեղեղների, սողանքների էական ռիսկերի: ՀՀ Տավուշի մարզում կարկտի հավանականությունը գնահատվում է 0.7, իսկ երկրաշարժինը 0.35 (0՝ չկա հավանականություն, 1՝ վտանգավոր է): Երկրաշարժերի հետևանքով հնարավոր են երկրորդական աղետներ ջրամբարներին վնաս պատճառելու դեպքում: Սողանքային գոտում են գտնվում Գոշի, Հաղարծինի և Իջևանի մի քանի թաղամասեր և Գետահովիտի, Ենոքավանի, Աչաջուրի, Ակնաղբյուրի, Բերքաբերի, Դիտավանի, Վազաշենի և Խաշթառակի գյուղերի հիմնական մասը: Տավուշի մարզում հեղեղումների հավանականություն մեծ է մարտ-ապրիլ և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Հիմնականում Իջևանը, Աչաջուրը, Բերքաբերը, Գանձաքարը, Սևքարը, Հովքը, Հախումը, Այգեպարը, Թովուզը, Հաղարծինը, Գոշը, Բաղանիսը, Ոսկեպարը, Ջուջևանը, Այրումը, Բագրատաշենը, Արչիսը և Դեբետավանը 51 922 ընդհանուր բնակչությամբ կարող են ենթարկվել հեղեղումների:

14. Մարզի տարածքով հոսում են բազմաթիվ մեծ և փոքր գետեր, որոնցից խոշորներն են Դեբեդը, Աղստևը, Հախումը: Գետերի միջին տարեկան հոսքը մոտ 17խմ/վրկ է, որը կազմում է շուրջ 530մլն խմ ջրային պաշար: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուռ գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Մարզում են գտնվում թվով 5 ջրամբարներ՝ Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ և Խաշթառակի (0.12 մլն խմ), որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով: Ընդհանուր ծավալը կազմում է 66.12 մլն խմ: Ջողազի ջրամբարը չի օգտագործվում սահմանային լինելու պատճառով, մնացած ջրամբարները ևս սահմանային են և մասամբ են օգտագործվում: Մարզում առկա են մի քանի փոքր բնական լճեր, որոնցից առավել հայտնի է Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճը:

15. Մարզի և, հատկապես, Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

16. Մարզում արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, բազալտը, ֆելզիտը, ցեոլիտը, ոսկին, ածուխը և այլն, որոնցից հիմնականում արդյունահանվում է Նոյեմբերյանի ֆելզիտը, ցեոլիտը, բազալտը, բենտոնիտային փոշին այն էլ ոչ մեծ ծավալներով: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը: Մարզում գոյություն ունեն օգտակար հանածոների պաշարներ, որոնք դեռևս վերջնական ուսումնասիրված չեն, դրանցից են ոսկին, պղինձը, քարածուխը: ՀՀ Տավուշի մարզի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրվել է 1 մետաղական երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն:

17. Մարզի տարածքում առկա են մի շարք սողանքային գոտիներ (Հաղարծին, Գոշ, Հովք, Վազաշեն, Աչաջուր, Գետահովիտ, Ակնաղբյուր, Այրում, Գանձաքար), որոնք ազդում են ինչպես մարզի զարգացման, այնպես էլ միջպետական, մարզային ու տեղական նշանակության ավտոճանապարհների բնականոն աշխատանքի վրա: Օրինակ Հաղարծնի, Այրումի և Հովքի սողանքները ազդում են միջպետական ավտոճանապարհների, Վազաշենի սողանքը՝ Իջևան-Բերդ մարզային նշանակության ավտոճանապարհի վրա: ՀՀ Տավուշի մարզում համայնքային մակարդակում աղետների ռիսկերը գնահատված են մասնակի:

18. Մարզի Ադրբեջանի հետ սահմանակից լինելը ստեղծում է հավելյալ անվտանգության ռիսկեր մարզի հողերի, ընդերքի, ջրային պաշարների օգտագործման, ինչպես նաև բնակվելու համար:

3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

19. ՀՀ Տավուշի մարզը հանդիսանում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը: Մարզի մշտական բնակչությունը 2016թ-ի տարեսկզբի դրությամբ կազմել է 125.5 հազ. մարդ, որից քաղաքային՝ 52.9 (42.2%) ***հազ. մարդ***, գյուղական՝ 72.6 (57.8%) ***հազ. մարդ***: Տղամարդիկ կազմում են բնակչության 47.9%-ը, կանայք՝ 52.1%-ը:

20. Հայաստանի Հանրապետության, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու մարզերի բնակչության սեռատարիքային կազմը 01.01. 2016թ. դրությամբ ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1. Մշտական բնակչության սեռա-տարիքային բաշխումը, 2016թ.հունվարի 1-ի դրությամբ

Տարիք	**ՀՀ**	**Տավուշ**	Գեղարքունիք	Լոռի
0-15	623678	**26172**	50660	48428
16-62	1987240	**80527**	157204	144968
63+	387659	**18815**	23930	31558
ընդամենը	2998577	**125514**	231794	224954
կին	1569535	**65421**	115292	120329
տղամարդ	1429042	**60093**	116502	104625

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:
Հղումը՝ http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

Աղյուսակ 2. Մշտական բնակչության թվաքանակը, 01/01 դրությամբ

(հազ. մարդ)

	2012	**2013**	**2014**	**2015**	**2016**
	Ամբողջ բնակչությունը				
ՀՀ	3 021.4	3 026.9	3 017.1	3 010.6	2 998.6
Տավուշ	**128.6**	**128.3**	**127.6**	**126.7**	**125.5**
Գեղարքունիք	235.4	235.6	234.1	233.0	231.8
Լոռի	235.6	234.7	230.8	228.0	225.0
Քաղաքային բնակչություն					
ՀՀ	1 912.7	1 917.5	1 914.1	1 912.9	1 907.0
Տավուշ	**54.2**	**54.1**	**53.9**	**53.5**	**52.9**
Գեղարքունիք	71.5	71.3	70.8	70.2	69.2
Լոռի	137.8	137.2	135.5	134.3	132.8
Գյուղական բնակչություն					
ՀՀ	1 108.7	1 109.4	1 103.0	1 097.7	1 091.6
Տավուշ	**74.4**	**74.2**	**73.7**	**73.2**	**72.6**
Գեղարքունիք	97.8	97.5	95.3	93.7	92.2
Լոռի	163.9	164.3	163.3	162.8	162.6

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016, էջ 41:
Հղումը՝ http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

21. Բնակչության խտությունը մարզում կազմում է շուրջ 46 մարդ 1 կմ^2 վրա, որը մոտ 2 անգամ ցածր է միջին հանրապետական ցուցանիշից: Մարզը բնակչության խտությամբ մոտ է հարակից ՀՀ Գեղարքունիքի մարզին և շուրջ 22%-ով զիջում է բնակչության խտությամբ ՀՀ Լոռու մարզին:

22. Մարզի բնակչության շուրջ 58% գյուղական բնակչություն է, միևնույն ժամանակ մարզի բնակչության շուրջ 30% կուտակված է 2 բնակավայրերում՝ Իջևան և Դիլիջան քաղաքներում:

23. Մարզի բնակչության ցածր բնական աճը պայմանավորված է ծնելիության ցածր մակարդակով և մահացությունների բարձր մակարդակով:

Գծապատկեր 1. ՀՀ Տավուշի մարզի ծնունդներ և մահացություններ, 2010-2015թթ.

Ծնունդներ



Մահվան դեպքեր



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 21 (http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf

24. Ծնելիությունը գտնվում է ցածր մակարդակում հիմնականում Դիլիջան քաղաքում, որը պայմանավորված է արտագնա աշխատանքի մեկնողների մեծ քանակով: Մարզի բնակչությունը տարեցտարի ունի նվազման միտում, որը պայմանավորված է նաև արտագաղթով, միևնույն միտումն է նկատվում նաև ՀՀ այլ մարզերում:

Աղյուսակ 3. Մշտական բնակչության թվաքանակը ՀՀ բնակչության նկատմամբ 01/01 դրությամբ

(%)

	2012	2013	2014	2015	2016
	Ամբողջ բնակչությունը				
Հայաստանի Հանրապետություն	**100**	**100**	**100**	**100**	**100**
Գեղարքունիք	7.79	7.78	7.76	7.74	7.73
Լոռի	7.80	7.75	7.65	7.57	7.50
Տավուշ	4.26	4.24	4.23	4.21	4.19
Քաղաքային բնակչություն					
Հայաստանի Հանրապետություն	**63.31**	**63.35**	**63.44**	**63.54**	**63.60**
Գեղարքունիք	2.37	2.36	2.35	2.33	2.31
Լոռի	4.56	4.53	4.49	4.46	4.43
Տավուշ	1.79	1.79	1.79	1.78	1.76
Գյուղական բնակչություն					
Հայաստանի Հանրապետություն	**36.69**	**36.65**	**36.56**	**36.46**	**36.40**
Գեղարքունիք	3.24	3.22	3.16	3.11	3.07
Լոռի	5.42	5.43	5.41	5.41	5.42
Տավուշ	2.46	2.45	2.44	2.43	2.42

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016,էջ 19 (http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf)

25. Հիմնախնդիր է մնում որոշ համայնքներից արտագաղթի թվաքանակի մեծությունը, որը կրում է նաև ներքին բնույթ:

3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Քաղաքներ՝
Իջևան,
Դիլիջան,
Բերդ,
Նոյեմբերյան,
Այրում
Մարզկենտրոն՝ ք. Իջևան

26. Մարզի 5 քաղաքներից ամենամեծը մարզկենտրոն Իջևանն է: Իջևան և Դիլիջան քաղաքները ունեն կարևոր պետական նշանակություն:

27. Իջևան: Իջևան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 20.7 հազ. մարդ), վարչական տարածքը 2768.73 հա) գտնվում է Երևանից 133 կմ հեռավորության վրա: Մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը): Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ: Իջևան քաղաքը հանդիսանում է ՀՀ 10-րդ քաղաքը, այստեղ են բնակվում ՀՀ քաղաքային բնակչության շուրջ 1.1%, մարզի քաղաքային բնակչության շուրջ 39% և մարզի բնակչության 16.5%: Իջևան քաղաքի բնակչությունը 2011թ-ից նվազել է 21.1 հազարից հասնելով 20.7 հազարի 2016թ. տարեսկզբին: Իջևան քաղաքի գլխավոր հատակագիծը մշակվել է 2005թ., որի համաձայն զարգանում է քաղաքը: Քաղաքն ունի կիսակառույց ճոպանուղի, որի կառուցման դեպքում մարզկենտրոնի գրավչությունը տուրիզմի և ներդրումների առումով կավելանա: Իջևան քաղաքը 1980 ական թվականներին հանդիսացել է արդյունաբերական քաղաք, այստեղ գործել է 16 մեծ արդյունաբերական կազմակերպություն, որոնցից ներկայումս գործում են 3 կազմակերպություն: Քաղաքում առկա է պոստ ինդուստրիալ տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր: Այսպիսի տարածքների ընդհանուր մակերեսը հասնում է 796.0 հազար քմ (քաղաքի տարածքի 28 %): Նրանք հիմնականում սեփականաշնորհված են և չեն վերահսկվում համայնքի կամ մարզպետարանի կողմից: Իջևան քաղաքի զարգացման խոչընդոտներից է հադիսանում նաև գործազրկությունը:

28. Դիլիջան: Դիլիջան քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 17.6 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 99 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: 2014թ. սեպտեմբերից գործում է <<Դիլիջան ինթերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա>> միջազգային դպրոցը: Դիլիջանը հանդիսանում է նաև մարզի զբոսաշրջության կենտրոնը, այստեղ են գտնվում հյուրանոցառեստորանային 36 համալիրներ, 45 հյուրատներ և հանգստի բազմաթիվ այլ ենթակառույցներ: Դիլիջան քաղաքի բնակչությունը կազմում է ՀՀ քաղաքային բնակչության շուրջ 0.9%, մարզի քաղաքային բնակչության շուրջ 33% և մարզի բնակչության 14.0%, ըստ բնակչության թվի Դիլիջանը հանդիսանում է Հանրապետության 19-րդ քաղաքը: Դիլիջան քաղաքի բնակչության աճը վերջին տարիներին կազմել է 15%, որը պայմանավորված է Միջազգային դպրոցի և ՀՀ Կենտրոնական բանկի շինարարական աշխատանքներով: Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագիծը մշակվել է 2005թ., որի համաձայն զարգանում էր քաղաքը, համայնքի խոշորացումից հետո մշակման փուլում է համայնքի նոր գլխավոր հատակագծի

կազմումը: Դիլիջան քաղաքի հիմնական զարգացման խոչընդոտներից է հանդիսանում սողանքային երևույթների առկայությունը, ռելիեֆի կտրտվածությունը, ենթակառուցվածքների անբավարար վիճակը, ինչպես նաև գործազրկությունը:

29. Նոյեմբերյան: Նոյեմբերյան քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 4.9 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 187 կմ է: Նոյեմբերյան քաղաքի բնակչությունը կազմում է ՀՀ քաղաքային բնակչության շուրջ 0.3%, մարզի քաղաքային բնակչության շուրջ 9% ը և մարզի բնակչության 4%-ը, ըստ բնակչության՝ տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է: Որոշակի դեր է խաղում նաև առևտուրը:

30. Բերդ: Բերդ քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 7.7 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 202 կմ է: Բերդ քաղաքի բնակչությունը կազմում է ՀՀ քաղաքային բնակչության շուրջ 0.4%: Մարզի քաղաքային բնակչության շուրջ 15%-ը և մարզի բնակչության 6%-ը Քաղաքի տնտեսական կյանքում գերակշռողը բազմաճյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը: Որոշակի դեր է խաղում նաև առևտուրը:

31. Այրում: Այրում քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 2.0 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 206 կմ է: Այրում քաղաքի բնակչությունը կազմում է ՀՀ քաղաքային բնակչության շուրջ 0.1%, մարզի քաղաքային բնակչության շուրջ 3.7% և մարզի բնակչության 1.6%-ը: Այն կայարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղվածությունը՝ մանրածախ առևտուրն է: Այրում կայարանի լրիվ հզորությամբ վերագործարկման դեպքում Այրումը կարող է դառնալ երկաթուղային փոխադրումների խոշոր կենտրոն:

32. Խնդրահարույց պոստ ինդուստրիալ տարածքներ: Ազատամուտ: Համայնքի (2016թ. տարեսկզբին՝ 2.7 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 145 կմ է: Ազատամուտ քաղաքատիպ ավանը հիմնադրվել է <<Բենտոնիտ>> կոմբինատի աշխատակիցների համար: Համայնքում կա 22 բազմաբնակարան բնակելի շենք, մշակույթի պալատ, դպրոց: Համայնքը բնակչությունը կազմում է մարզի բնակչության շուրջ 2.1%: Բնակչության հիմնական զբաղվածությունը արտագնա աշխատանքն է և մանրածախ առևտուրը:

3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

33. ՀՀ Տավուշի մարզով են անցնում 152.6 կմ միջպետական նշանակության ավտոճանապարհները կամ Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 10%-ը, որը ավտոտրանսպորտային կապ է ապահովում թե հարևան Վրաստանի Հանրապետության, թե հարակից մարզերի հետ:

34. Ավտոտրանսպորտ: ՀՀ Տավուշի մարզում բեռնա և ուղևորափոխադրումներն հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Այժմ միջպետական փոխադրումներն իրականացվում են Երևան-Սևան-Իջևան-Նոյեմբերյան-Բագրատաշեն ավտոճանապարհով և ակտիվորեն օգտագործվում է մարզում գտնվող Բագրատաշենի մաքսակետը: Ներկայումս կապիտալ վերանորոգվում է Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն ավտոճանապարհը և շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2018թ.: Միևնույն ժամանակ՝ Հանրապետությունում կառուցվում է Հյուսիս-Հարավ ավտոճանապարհը, որը կդառնա Հայաստանը Վրաստանի հետ կապող հիմնական ճանապարհը և հիմնական մաքսակետ կհանդիսանա ՀՀ Շիրակի մարզում գտնվող Բավրայի անցակետը:

35. Կանխատեսումները ցույց է տալիս, որ այն որոշակի բացասական ազդեցություն կունենա մարզի սոցիալ-տնտեսական վիճակի՝ հատկապես, միջպետական ճանապարհներին կից գործող՝ տրանսպորտային, սննդի և առևտրի սպասարկման օբյեկտների աշխատանքի վրա:

Աղյուսակ 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնափոխադրումների և բեռնաշրջանառության ծավալը

Հ	Մարզը	Բեռնափոխադրումների	Բեռնաշրջանառության ծավալը

/h		ծավալը /հազ. տոննա/			/մլն. տոննա-կմ/		
		2015	2010	2010թ. համեմատությամբ %	2015	2010	2010թ. համեմատությամբ %
1	**Տավուշ**	**199**	**820.4**	**24.2**	**2.7**	**10.1**	**27.3**
2	Լոռի	520.4	443.6	117.3	2.5	9.9	252.5
3	Գեղարքունիք	76.8	269.5	28.4	8.3	3.2	259.4

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53:
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

Աղյուսակ 5. Ընդհանուր ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ծավալը

Հ /h	Մարզը	Ուղևորափոխադրումների ծավալը /հազ. մարդ/			Ուղևորաշրջանառության ծավալը /մլն. ուղևոր-կմ/		
		2015	2010	2010թ. համեմատությամբ %	2015	2010	2010թ. համեմատությամբ %
1	**Տավուշ**	**1 197.8**	**1691.9**	**70.8**	**20.5**	**24.1**	**85.1**
2	Լոռի	7 319. 9	10266.1	71.3	88.7	135.8	65.3
3	Գեղարքունիք	1 503.7	1826.5	82.3	46.9	31.9	147.0

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53:
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

36. Տնտեսական անկման պատճառով՝ առանց Վանաձոր-Ալավերդի և Հյուսիս-Հարավ ճանապարհների շահագործման հանձնելու, նվազել են ներմարզային և միջանցիկ փոխադրման ծավալները, ինչը հստակ արտացոլվում է նաև մարզում իրացվող վառելիքի վաճառքների նվազմամբ:

Գծապատկեր 2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնափոխադրումների և բեռնաշրջանառության ծավալը









Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53:
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

37. 2016թ.-ին համեմատ 2009թ.-ի ավելի քան կրկնակի նվազել են մարզի քաղաքների և մայրաքաղաքի ու Վանաձոր քաղաքի միջև գործող միջմարզային երթուղիների քանակը: 2016թ. գործում են 13 ներմարզային երթուղիներ՝ 2009թ. 32-ի փոխարեն: Մարզի 63 բնակավայրերից 34-ը՝ սպասարկվում կամ օգտվում են հասարակական տրանսպորտի աշխատանքից (որտեղ բնակվում են մարզի բնակչության 85%):

38. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ծավալը բավականին ցածր է համեմատ հարակից ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերի: Բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության ծավալները 2014թ. համեմատությամբ 2015թ. նվազել է շուրջ 10%-ով, որը պայմանավորված է եղել սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխություններով և, հատկապես, այն հանգամանքով, որ համայնքների շուրջ 75%-ը սահմանամերձ են: Սա բացասաբար է անդրադառնում տրանսպորտի աշխատանքների վրա՝ միջսահմանային լարվածությունների ժամանակ:

39. Մարզի ներհամայնքային և միջհամայնքային մատչելիությունը ավելի ցածր է ՀՀ Լոռու մարզի ցուցանիշներից և մոտ է ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշներին:

Աղյուսակ 6. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն, 2015թ.

	Ներմարզային հասանելիություն, րոպե	Մարզից Երևան հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջ և ներհամայնքային հասանելիության միջև, %
Տավուշ	**33**	**101**	**306%**
Լոռի	16	92	575%
Գեղարքունիք	31	74	239%

Աղբյուրը՝ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն, էջ18:
Հղումը՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf

Աղյուսակ 7. ՀՀ Տավուշի մարզի քաղաքային համայնքների հասանելիությունը

Համայնքներ	Հասանելիությունը՝ դեպի ազգային կենտրոններ / րոպե/		
	Երևան	Սևան	Վանաձոր
Իջևան	140	80	90
Դիլիջան	105	45	55
Նոյեմբերյան	190	130	140
Բերդ	205	145	155
Այրում	210	150	160

Նշում. Ներհամայնքային ճանապարհների մատչելիությունը հաշվարկվում է ըստ ճանապարհային երթևեկության տևողության դեպի հարևան համայնքներ կամ Երևան և ըստ բնակչության թվի:
Աղբյուրը՝ ՀՀ 2016-2025թթ. Տարածքային զարգացման ռազմավարություն:

40. Երկաթուղի: Մարզում է գտնվում Այրումի երկաթուղային կայարանը, որը մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող է մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումների: Ներկայումս օգտագործվում է նրա հնարավորությունների 15%-ը: Դեպի Այրումի երկաթուղային կայարան՝ ներկայումս գործում է «Գյումրի-Այրում» էլեկտրագնացքը և «Թբիլիսի-Երևան» մարդատար գնացքը:

41. Օդային տրանսպորտ: Մարզում առկա է Այգեպարի և Բագրատաշենի օդանավակայանները, որոնք չեն գործում:

42. Հեռահաղորդակցություն: Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ <<Արմենթել>> ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ (Վիվա սելլ) ՄՏՍ ապրանքանիշ) և <<ՅՈՒՔՈՄ>> (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են բջջային և ինտերնետ ծածկույթով (օպտիկամանրաթելային և եթերային–շարժական): Մարզում ինտերնետ կապից ակտիվ օգտվողները կազմում են մարզի բնակչության շուրջ 50%-ը:

Vivacell Ucom Beeline



43. Մարզում լարային հեռախոսակապ ապահովում է <<Արմենթել>> ՓԲԸ (Beeline ապրանքանիշ) և Ռոստելեկոմ ընկերությունը: Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի 62 բնակավայրերը:

44. Մարզի 49 համայնքում գործում է <<Հայփոստ>> ՓԲԸ–ի 54 բաժանմունքներ, ապահովելով մարզի բնակավայրերի 100% ծածկույթը:

45. ՀՀ Տավուշի մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ Տավուշի տարածքային բաժնի կողմից՝ 34 թվային կայանների միջոցով, ապահովելով մարզի բնակավայրերի 100% ծածկույթը: Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև մարզային <<Տավուշ TV>> և <<Իջևան TV>> տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև <<Հանրային ռադիոն>>, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

46. Ճանապարհներ: ՀՀ Տավուշի մարզն ընդգրկում է 152.6կմ միջպետական նշանակության, 336.8 կմ հանրապետական նշանակության և 300.1 կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ և 960 կմ բնակավայրերի փողոցներ կամ ներհամայնքային ճանապարհներ:

Աղյուսակ 8. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ.ք հաշվով (կմ /կմք)	Խտությունը 10000 բնակչի հաշվով , (կմ/10 000 բնակիչ)

Տավուշի մարզ			
Միջպետական	152.6	0.056	12.04
Հանրապետական	336.8	0.125	26.58
Մարզային (տեղական)	300.1	0.111	23.69
Ընդհանուր	789.5	0.292	62.31
Գեղարքունիքի մարզ			
Միջպետական	283.1	0.05	12.1
Հանրապետական	113.4	0.02	4.8
Մարզային (տեղական)	419.9	0.078	18.0
Ընդհանուր	816.4	0.15	35.0

Աղբյուրը՝ ՀՀ Տավուշի մարպետարանի վերլուծությունը

47. Վիճակագրությունը համեմատելով հարակից ՀՀ Գեղարքունիքի մարզի հետ, ՀՀ Տավուշի մարզի ճանապարհային խտությունը բնակչության հաշվով և ըստ զբաղեցրած տարածքի գրեթե 2 անգամ ավելի է:

48. ՀՀ Տավուշի մարզով են անցնում միջպետական Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, Մ-6 Վանաձոր -Ալավերդի-Վրաստանի սահման, Մ-8 Վանաձոր Դիլիջան, Մ-16Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 միջպետական նշանակության ավտոճանապարհները, որոնք կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 10%-ը և նշված ավտոճանապարհներով են իրականացվում Վրաստանի Հանրապետությունից ներմուծվող և արտահանվող ՀՀ բեռնափոխադրումների զգալի մասը:

49. Մարզով անցնող միջպետական ճանապարհները հիմնականում գտնվում են լավ կամ բավարար վիճակում, որը սակայն չի կարելի ասել հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների վերաբերյալ: Վերոնշյալը վերաբերում է նաև ռազմավարական նշանակություն ունեցող շրջանցիկ ճանապարհներին:

Աղյուսակ 9. Մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վիճակը

Հ/Հ	Մարզի և տարածաշրջանների կտրվածքով	Ճանապարհի նշանակությունը	Ճանապարհների վիճակը /կմ/			
			լավ	բավարար	վատ	ընդամենը
1	Մարզի կտրվածքով	Միջպետական	56.5	96.1	-	152.6
		Հանրապետական	115.3	167.5	54.0	336.8
		Տեղական (մարզային)	46.8	13.7	239.6	300.1
	Ընդամենը՝ մարզում		**218.6**	**277.3**	**295.8**	**791.7**

Աղբյուրը ՀՀ Տավուշի մարպետարանի վերլուծությունը

50. Մարզի ընդհանուր օգտագործման պետական նշանակության 791.7 կմ ճանապարհներից լավ վիճակում են գտնվում 218.6 կմ-ը (կամ 27.6%), բավարար՝ 277.3 կմ-ը (կամ 35.0%), վատ՝ 295.8 կմ-ը (կամ 37.4%):

51. Մարզի միջպետական և հանրապետական նշանակության 435.4 կմ ճանապարհները (կամ մարզի ճանապարհային ցանցի 55.0%-ը) գտնվում է լավ կամ բավարար վիճակում:

52. Դիտարկումը ցույց է տալիս, որ հիմնականում վատ վիճակում են գտնվում համայնքներ տանող (մարզային նշանակության) 239.6 կմ ճանապարհները (կամ մարզի ճանապարհային ցանցի 30.3%-ը):

53. **Երկաթուղի:** Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ հատվածը (ներկայումս չի գործում): Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ հատվածը, որը շահագործվում է: Մարզում է գտնվում Այրումի

երկաթուղային կայարանը, որը մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող է մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումների իրականացման համար:

54. Օդային տրանսպորտ: Մարզում առկա են օդային տրանսպորտի ենթակառուցվածքներ, որոնք ներկայումս չեն գործում, մասնավորապես՝ Այգեպարի և Բագրատաշենի օդանավակայանը:

55. Էներգետիկ ենթակառուցվածքներ: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան էլեկտրամատակարարմամբ:

56. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 15 փոքր ՀԷԿ-եր տարեկան մոտ 79.8 մլն.կվտժ, 23996 կՎտ ընդհանուր հզորությամբ: Միևնույն ժամանակ, կառուցման փուլում են գտնվում ևս 3 փոքր ՀԷԿ-եր՝ 2983 կՎտ ընդհանուր նախագծային հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա մոտ 15.7 մլն.կվտժ-ով:

57. Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս–Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզի գրեթե բոլոր բնակավայրերը, բացառությամբ՝ Կիրանց, Աճարկուտ, Բերքաբեր համայնքների, գազաֆիկացված են, գազի բաժանորդների թիվը աճում է տարեց-տարի, 2016թ.-ին ավելացել է ևս 1.5%, կազմել է 26 673: 3 չգազիֆիկացված բնակավայրերում բնակվում են մարզի բնակչության 0.7%-ը:

58. Կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքներ: Մարզի 28 բնակավայրերում գոյություն ունեն կոյուղու գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 76.2%: Միայն Դիլիջան քաղաքի կոյուղու համակարգը 2015 թվականից միացված է գործող կոյուղու մաքրման կայանին, որը սպասարկում է մարզի բնակչության 13.4%, մնացած 27 բնակավայրերի կոյուղին միացված է հոսող գետերին:

59. Մարզի 8 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի 48% բնակչությունը աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: 4 քաղաքներ (Դիլիջան, Իջևան, Բերդ, Նոյեմբերյան) ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության 38%: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: Մարզում կոշտ թափոնների վերամշակման գործարաններ չկան:

60. Ջրամատակարարում: ՀՀ Տավուշի մարզի բնակավայրերից 15-ը չունեն կայուն ջրամատակարարում: ՀՀ Տավուշի մարզի բնակչության 50% ունի 8 և ավելի ժամ ջրամատակարարում:

61. ՀՀ Տավուշի մարզում 2016 թվականի ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 6264 նմուշ, շեղում արձանագրվել է 502-ում (8%): Մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ արձանագրվել են՝ Դիլիջան քաղաքում, Մովսես, Սարիգյուղ, Ոսկևան, Արծվաբերդ, Նորաշեն, Տավուշ, Ն. Կ. Աղբյուր, Չինչին, Նավուր, Այգեձոր, Պառավաքար, Վարագավան, Ծաղկավան, Հաղարծին, Գետահովիտ, Խաշթառակ Գանձաքար, Այգեհովիտ, Սևքար, Ազատամուտ, Դիտավան, Վազաշեն գյուղերում: Սանիտարաքիմիական ցուցանիշներով ջրի 4008 նմուշի հետազոտություն, 24-ում (0.6%) արձանագրվել է շեղում՝ Դիլիջան քաղաքում «Բլդան» մաքրման կայանից մատակարարվող ջրում և Կիրանց գյուղի խմելու ջրում:

3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

62. ՀՀ Տավուշի մարզի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է հանրապետության միջին ցուցանիշի շուրջ 50%-ը:

Աղյուսակ 10. ՀՀ Տավուշի մարզի ՀՆԱ-ի դինամիկա, 2013- 2015թթ,.

Հ/Հ	Անվանում	Տարի	ՀՆԱ, մլրդ. դրամ	Բնակչու-թյուն	1 շնչին ընկնող ՀՆԱ	Նախորդ տարվա հետ

				մարդ		աճ/նվազում, %
1	Հայաստան	2014	4 828.626.3	3010600	1602.172	3.6
		2015	5 032.089.0	2998600	1.674.795	3.0
2	**Տավուշ**	**2014**	**60 161.7**	**127600**	**838.010**	**- 44.3**
		2015	**57 808.9**	**126700**	**824.423**	**- 1.6**
3	Լոռի	2014	239 800.9	230800	995.671	16.9
		2015	237 532.0	228000	1.041.807	4.6
4	Գեղարքունիք	2014	241 990.7	234100	1.033.707	8.6
		2015	248 110.5	233000	1.064.852	3.0

Աղբյուրը՝ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

63. Աղյուսակից պարզ երևում է, որ նախորդ տարիների նկատմամբ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն նվազել է ՀՀ Տավուշի մարզում, իսկ 2014թ. կտրուկ անկումը պայմանավորված է 2013 թվականից հետո շինարարության ծավալների նվազմամբ:

Գծապատկեր 3. Հայաստանի ՀՆԱ

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը 2009 և 2015թթ.



Հայաստանի ՀՆԱ-ի մարզային մասնաբաժինները , 2014



Աղբյուրը՝ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

64. Չնայած նրան, որ մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական արտադրանքի ծավալը 2011թ-2015թ. աճել է շուրջ 27% մարզի կտրվածքով այն աճել է միայն 21%-ով:

Աղյուսակ 11. ՀՀ-ում, Տավուշի և Լոռու մարզերում միջին ամսական անվանական աշխատավարձը ըստ տնտեսության հատվածների (2013-2015թթ.)

	Պետական (դրամ)				*Ոչ պետական (դրամ)*			
	2013	**2014**	**2015**	**աճը (%)**	**2013**	**2014**	**2015**	**աճը (%)**
ՀՀ	134193	146596	160522	119.6	160324	172073	184416	115.0
Տավուշ	**90080**	**99847**	**111752**	**124.1**	**125555**	**153526**	**161160**	**128.4**
Լոռի	96295	104491	114293	118.7	137635	156501	177325	128.8

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, վերլուծություն (http://armstat.am/am/?nid=81&id=1834)

65. Մարզի աշխատողների ամսական աշխատավարձը միջին հանրապետական ցուցանիշից ցածր է, պետական հատվածում 30.4%-ով, ոչ պետական՝ 12.6%-ով: Միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների կազմել է պետական՝ 160522 դրամ, ոչ պետական՝ 184416 դրամ: ՀՀ Տավուշի մարզում կազմել է պետական՝ 111752 դրամ, ոչ պետական՝ 161160 դրամ, ինչը ցածր է հանրապետական միջին աշխատավարձից [http://www.armstat.am/file/article/20.trud_2016_13.pdf]:

Աղյուսակ 12. Մարզի ընտանեկան եկամուտների աղբյուրների համեմատականը, 2015թ.

Ընտանեկան եկամտի աղբյուրները 2015թ. մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ		այդ թվում՝						
	ընդամենը դրամական եկամուտներ	վարձու աշխատանք	Ինքնազբաղվածություն	գյուղմթերքի և կենդանիների վաճառք	Սեփականություն թույլից եկամուտ	պետական թոշակներ և նպաստներ	տրանսֆերտներ	այլ եկամուտ
Ընդամենը	**52.377**	**28.800**	**4.842**	**2.674**	**115**	**9.284**	**4.698**	**1.964**
Գեղարքունիք	42.205	14.272	1.974	4.563	0	8.435	4.549	8.412
Լոռի	37.413	15.410	1.587	886	0	11.171	5.486	2.873
Տավուշ	**38.592**	**19.985**	**4.384**	**884**	**106**	**10.443**	**1.082**	**1.708**

Աղբյուրը՝ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 218: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf

66. Վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի ընտանեկան ընդհանուր դրամական եկամուտի մեջ գերակշիռ մասը բաժին է ընկնում վարձու աշխատանքներին և պետական թոշակներ ու նպաստներին:

67. Մարզի գյուղ նշանակության հողերի մոտ 8000 հա սահմանին լինելու պատճառով չի մշակվում: Այս բնակավայրերի աջակցության համար 2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքը, որը տարածվում է մարզի 26 համայնքների վրա, որտեղ բնակվում են մարզի բնակիչների շուրջ 36%: Սպասվում է, որ այս օրենքը կտա իր դրական ազդեցությունը ՀՀ Տավուշի մարզի ՀՆԱ-ի վրա:

68. Բացի գյուղատնտեսությունից, մարզում զբաղվածություն են ապահովում նաև հետևյալ ճյուղերը՝

Աղյուսակ 13. ՀՀ Տավուշի մարզի զբաղվածություն ապահովող հիմնական ճյուղերը, բացի գյուղատնտեսության

Հ/Հ	Անվանումը	Աշխատողների թիվը
1	առևտուր	1379
2	հասարակական սնունդ	395
3	կենցաղային սպասարկում	171
4	արտադրական կազմակերպություն	880
5	դպրոցներ	2853
6	մանկապարտեզներ	650
7	բժշկական կազմակերպություններ	985
8	համայնքապետարաններ	418

Մարզպետարանի կատարած ուսումնասիրություններ

69. Օգտագործելով հարկային արտոնությունները, 2015-2016թթ. ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ Չորաթան համայնքում հիմնվեց <<Տավուշտեքստիլ>> ՍՊԸ-ն է՝ 200 նոր աշխատատեղով: Նոր կազմակերպություններ են նախատեսվում հիմնվել սահմանամերձ Ոսկևանում և Բաղանիսում: Միևնույն ժամանակ ստեղծվել են մի շարք նորաստեղծ առևտրի կենտրոններ, մասնավորապես Իջևանում, որտեղ աշխատողների թիվը հասնում է 30-ի: Վերջին տարիների ընթացքում աշխատատեղերի ստեղծման նպատակով պետական, համայնքային և միջազգային ծրագրերով ստեղծվել են բազմաթիվ փոքր կարողություններ (հիմնականում գյուղ

մթերքների արտադրող, վերամշակող), որոնցով գյուղատնտեսությունում ստեղծված աշխատատեղեր՝ 374 են: Հաջողված փորձեր են գրանցվել վերամշակման, ջերմոցային, սառնարանային և չրի արտադրություններում:

3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

70. ՀՀ Տավուշի մարզումի տնտեսապես ակտիվ բնակչության քանակը կազմում է 63.3 հազար մարդ, որը նվազել է 2013թ. համեմատ, մարզի ընդհանուր բնակչության 71.2 % հասնելով 65.3%, սակայն անկախ նվազման տեմպերից, որոք ավելի արագ էին քան միջին հանրապետությունով, միևնույն է մնում են ավելի բարձր, քան հարակից մարզերում (Գեղարքունիք 56.8%, Լոռի 58.8%) և ընդհանուր հանրապետությունում (62.5%) :

Աղյուսակ 14. Տնտեսապես ակտիվ բնակչության քանակը

	Ընդամենը, 1 000 մարդ			Տղամարդ			Կին		
	2013	**2014**	**2015**	**2013**	**2014**	**2015**	**2013**	**2014**	**2015**
Հայաստանի Հանրապետություն	1.388.4	1.375.7	1.316.4	709.4	699.9	682.7	679.0	675.7	633.7
Գեղարքունիք	91.8	97.1	79.9	40.4	44.5	38.7	51.3	52.7	41.2
Լոռի	131.1	137.8	114.7	60.2	61.1	56.5	70.9	76.8	58.3
Տավուշ	**67.0**	**65.8**	**63.3**	**31.7**	**32.9**	**31.0**	**35.3**	**32.9**	**32.3**

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 87:
Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf

71. Մարզում գործազրկության մակարդակը զգալիորեն ավելի ցածր է քան միջին հանրապետական ցուցանիշը, սակայն այդ ցուցանիշը երիտասարդության համար զգալիորեն ավելի բարձր է, քան միջին հանրապետական և հարակից մարզերի ցուցանիշները: Սրա հիմնական պատճառներից կարող է լինել երիտասարդների կողմից շուկայում պահանջարկ չունեցող մասնագիտությունների ստացումն, որը խոսում է կրթական համակարգի խնդիրների մասին:

Աղյուսակ 15. ՀՀ Տավուշի մարզի զբաղվածության կենտրոններում հաշվառված գործազուրկներ, (2016թ.)

հ/հ	Զբաղվ. կենտրոնը	Հաշվառված աշխատանք փնտրող անձինք	Որից կին	Որից գյուղաբնակ	Որից բարձրագույն կրթ.	Որից աշխ.տեղավորվածներ	Որից հաշման դամներ	Կենտրոնում հաշվառված գործազուրկներ	Որից կին	Որից բարձրագույն կրթ.
1	Իջևան	2241	1376	1307	328	246	94	2092	1301	318
2	Դիլիջան	2304	1475	563	163	95	43	1477	957	93
3	Բերդ	916	548	634	49	96	2	765	448	43
4	Նոյեմբերյան	1137	651	666	42	89	6	802	455	39
	Ընդամենը	5916	4050	3170	528	536	51	5220	3161	493

Աղբյուրը Տավուշի մարզպետարանի կատարած վերլուծությունը

72. Տվյալները ցույց են տալիս, որ զբաղվածության մակարդակը զգալիորեն ցածր է քաղաքային համայնքներում: Ինչը բացատրվում է նրանով, որ բարձր զբաղվածություն ապահովողն է հանդիսանում հիմնականում գյուղատնտեսությունը, այստեղ զբաղվածների թիվը գերազանցում է 30000, հիմնական աշխատատեղերը տնտեսության այս ճյուղում ոչ ֆորմալ են: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում գործազուրկներն ավելի հեշտ են աշխատանք գտնում, քան հարակից մարզերում:

Աղյուսակ 16. Գործազրկության մակարդակ, %

	Ընդամենը, %			Տղամարդ			Կին		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
ՀՀ	16.2	17.6	18.5	14.4	15.8	17.6	18.1	19.5	19.5
Գեղարքունիք	8.2	5.8	4.7	6.6	7.7	6.4	9.4	4.1	3.1
Լոռի	19.2	16.9	15.7	17.1	17.3	14.9	21.0	16.7	16.5
Տավուշ	**11.3**	**10.9**	**12.1**	**9.5**	**11.4**	**14.1**	**12.9**	**10.4**	**10.1**

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 93: Հղումը՝http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf

3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

73. ՀՀ Տավուշի մարզը հանդիսանում է ագրարային, թերի զարգացած արդյունաբերության և ծառայությունների ոլորտով մարզ: 2015թ.-ին ՀՀ Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

1) արդյունաբերություն՝ 0.8 %,
2) գյուղատնտեսություն՝ 4.6 %,
3) շինարարություն՝ 4.2 %,
4) մանրածախ առևտուր՝ 1.9 %,
5) ծառայություններ՝ 0.9 %:

74. Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի և շինարարության գծով ՀՀ Տավուշի մարզի ցուցանիշները մոտ են միջին հանրապետական թվերին, մանրածախ առևտրի գծով ցածր են կրկնակի, արդյունաբերության և ծառայությունների գծով անգամ քառակի:

Գծապատկեր 4. Արդյունաբերական արտադրանքի ծավալը և համեմատականները



Գծապատկեր 5. Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը և համեմատականները



Գծապատկեր 6. Շինարարություն

(ընթացիկ գներ մլն.դրամ)



Գծապատկեր 7. Մանրածախ առևտրի շրջանառությունը,

(ընթացիկ գներ մլն.դրամ)



Գծապատկեր 8. Ծառայությունների ծավալը

(ընթացիկ գներ մլն.դրամ)



Գծապատկեր 9. Արտահանում

(մլն.դրամ)



75. Մարզի ներմուծման և արտահանման ծավալները մեկ շնչի հաշվով շատ ցածր են, արտահանումը մեկ շնչի հաշվով շուրջ քսան անգամ ցածր է միջին հանրապետական ցուցանիշներից, իսկ ներմուծումը շուրջ 13 անգամ, սա պայմանավորված է մարզի գյուղատնտեսական ուղղվածությամբ և թերի զարգացած արդյունաբերությամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ 2011թ. սկսած մարզի արտահանման ծավալները ավելի քան կրկնապատկվել են, սակայն կշիռը հանրապետության միջինի հետ ավելացել է աննշան 0.14% հասնելով մինչև 0.22% :

76. Մարզի համար կարևոր ոլորտ է հանդիսանում նաև զբոսաշրջությունը, որի աճը վերջին տարիներին բավականին զգալի էր, անկախ այն փաստից, որ 2015թ. հասույթը ավելի ցածր է եղել, քան 2014թ. հասույթը: 2011թ. սկսած հյուրանոցային տնտեսության հասույթները աճել են շուրջ 2.3 անգամ միջին հանրապետական 2.0 անգամ աճի դիմաց, հարակից ՀՀ Գեղարքունիքի և Լոռվա մարզերի համապատասխանաբար 2.2 ու 1.5 անգամ աճերի դիմաց: Մեծ

աշխատանքներ են իրականացվում ազատ հանգստի գոտիների ձևավորման ուղղությամբ, ինչպես նաև տարեց-տարի ավելանում են մարզի տարածքում կազմակերպվող փառատոնները, որոնք ևս նպաստում են զբոսաշրջության զարգացմանը:

77. Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդարդյունաբերությունն ու փայտամշակումը: Մարզում արտադրվում է բենտոփոշի, երեսապատման սալիկներ, գինիներ, պահածոներ, իսկ 2015թ. Չորաթան համայնքում հիմնվել է կարի ֆաբրիկա, որտեղ աշխատում են ավելի քան 200 աշխատակիցներ, հիմնականում կանայք: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ: ՀՀ Տավուշի մարզում գրանցված են ավելի քան 145 արտադրական և 1038 առևտրային կազմակերպություններ, 83 կազմակերպություն 10 000 բնակչի հաշվով: Հիմնական աշխատատեղեր են ստեղծում միջին մեծության կազմակերպություններն ու առևտրային կազմակերպությունները:

Աղյուսակ 17. Մարզում գրանցված խոշոր գործատուների մասին

Հ/Հ	Գործատու	Ոլորտ	Աշխատողների քանակ
1	Իջևանի Բենտոնիտ ԲԲԸ	հանքարդյունաբերություն	95
2	<<Քարարտ>> ՍՊԸ	Քարի վերամշակում	40
3	Իջևանի օղու, գինու և պահածոների գործարան	օղու, գինու և պահածոների արտադրություն	35
4	Երևանի <<Արարատ>> կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղ	Կոնյակի սպիրտի արտադրություն	22
5	<<Տավուշտեքստիլ>> ՍՊԸ	Կարի ֆաբրիկա	200
6	Դիլիջան հանքային ջրերի գործարան	Հանքային ջրերի գործարան	43
7	<<ԴԻԼԻ>>ՍՊԸ	Անասնապահություն և կափի վերամշակում	13
8	<<Մասիս տոբակո>> ՍՊԸ	Ծխախոտի վերամշակում	

Աղբյուրը ՀՀ Տավուշի մարզպետարանի կատարած վերլուծությունը

78. Մարզից կատարվող արտահանումը բաժին է ընկնում հիմնականում հանքարդյունաբերությանը և գյուղատնտեսությանը (1200-1500տ) ամսական: 2015թ. ՀՀ կառավարության որոշմամբ ոչ մետաղական հանքերի բնավճարը 1650 դրամից բարձրացվել է մոտ կրկնակի անգամ, որը լուրջ դժվարություններ և խոչընդոտներ է ստեղծում Հայաստանի միակ և մարզի արդյունաբերության առաջնային տեղ զբաղեցնող <<Բենտոնիտ>> ԲԲԸ-ի (95 աշխատող) հետագա գործունեության համար:

79. Մարզում գործող մոտ 23996 կՎտ ընդհանուր հզորությամբ 15 փոքր ՀԷԿ-երը արտադրում էն տարեկան մոտ 79.8 մլն.կվտժ էլեկտրաէներգիա, որը կազմում է ՀՀ ում փոքր ՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի 8.3%: Մարզի զարգացվածությունը անհամաչափ է, մասնավորապես աչքի է ընկնում Դիլիջան քաղաքի զարգացման տեմպերը, որտեղ են կենտրոնացված մարզի հիմնական հյուրանոցային հզորությունները, որը կապված է զբոսաշրջության, ֆինանսական կառույցների մասնաճյուղերի բացման և նոր ուսումնական հաստատությունների հիմնադրման հետ:

80. Մարզում գոյություն ունեն հետևյալ բնակավայրերը, որոնք վերջին տարիներին ապրել են խորը անկում՝ Այրում, Բագրատաշեն, Դեբեդավան, Դեղձավան, Պտղավան Դովեղ, Բարեկամավան, Աճարկուտ, Կիրանց, Ծաղկավան, Սարիգյուղ, Բերքաբեր, Ազատամուտ, Կայանավան(Այգեհովիտ), Վազաշեն, Պառավաքար, Այգեպար, Մովսես, Չորաթան, Չինարի, Այգեձոր, Վ.Կ.Աղբյուր, Բերդ և այլն, որոնց մի մասը պայմանավորված են սահմանային շուկայի փակմամբ, սահմանամերձ լինելու կամ արտադրական կազմակերպությունների չաշխատելու,

ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայության կամ սահմանին լինելու հետ:

81. Մարզում առկա է նաև գենդերային անհավասարակշռություն, տարեցտարի նվազում են համայնքի կին ավագանու անդամների, կրթական ոլորտում տղամարդկանց թիվը և այլն: Պատճառները բազմաթիվ են (տարիներով ձևավորված կարծրատիպեր և այլն): Մարզի տարածքում էթնիկ փոքրամասնություններ գրեթե չկան:

82. **Գյուղատնտեսություն:** ՀՀ Տավուշի մարզում ընդհանուր ցանքը 2016թ.-ի կազմել է 16.518 հա՝ նախորդ տարվա 16.418 հա դիմաց (հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները աճել են 104 հա-ով, բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները շուրջ 15 հա-ով, կարտոֆիլի ցանքատարածությունները՝ շուրջ 30 հա-ով:

Աղյուսակ 18. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքային տարածություններն, 2016թ. հունվար-դեկտեմբեր

Հեկտար

	Հացահատիկ և հատիկաընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Բոստան	
	2016	2016-2015թթ. նկատմամբ,%	2016	2016-2015թթ. նկատմամբ,%	2016	2016-2015թթ. նկատմամբ,%	2016	2016-2015թթ. նկատմամբ,%
Գեղարքունիք	41 447	88.5	15 389	97.8	2 239	99.2	-	-
Լոռի	14 746	103.5	4 613	107.8	1 800	112.1	20	125
Տավուշ	**10 083**	**101**	**2 026**	**101.5**	**1 156**	**101**	**90**	**84.1**
ՀՀ	203 720	101.2	34 022	102.1	30 782	105.9	7 268	107.2

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2016թ. հունվար-դեկտեմբեր, http://armstat.am/file/article/sv_12_16a_122.pdf

Աղյուսակ 19. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքն, 2016թ. հունվար-դեկտեմբեր

Ցենտներ

	Հացահատիկ և հատիկաընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն	
	2016	2016- 2015թթ. նկատմամբ,%	2016	2016- 2015թթ. նկատմամբ,%	2016	2016- 2015թթ. նկատմամբ,%
Գեղարքունիք	1 061 106	75.3	3 323 111	91.4	587 301	90.4
Լոռի	478 747	101.6	742 677	97.9	335 777	110.1
Տավուշ	334 073	87.9	221 882	88.1	117 488	86.7
ՀՀ	6 217 032	97.5	7 321 018	95.8	9 911 545	96.1
	Բոստան		Պտուղ և հատապտուղ		Խաղող	
	2016	2016- 2015թթ. նկատմամբ,%	2016	2016- 2015թթ. նկատմամբ,%	2016	2016- 2015թթ. նկատմամբ,%
Գեղարքունիք	-	-	112 513	43.4	-	-
Լոռի	1 590	107.4	15 795	64.4	1 313	70.7
Տավուշ	24 520	77.7	106 412	68.5	72 005	43
ՀՀ	2 361 450	82.3	2 426 020	62.8	1 787 518	57.8

83. 2016թ.-ի ցանքատարածությունների աճին զուգընթաց արձանագրվել է հացահատիկի և հատիկաընդեղենի, կարտոֆիլի, բոստանի բերքի աճ, իսկ բանջարեղենի, պտղի և հատապտղի, խաղողի բերքը նվազել է:

84. Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 5.4%-ը (37.8 հազար գլուխ

տավար, որից 17.7 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ գրեթե 22.6%-ը (17.6 հազար գլուխ) և խոզերի՝ 11.5%-ը (20.0 հազար գլուխ):

Աղյուսակ 20. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը

(գլուխ)

	Խոշոր եղջերավոր կենդանի		որից՝ կով		Խոզ		Ընդամենը ոչխար և այծ		Ձի	
	01.01.16թ.	01.01.16թ 01.01.15թ Նկատ. %-ով	01.01.16թ.	01.01.16թ 01.01.15թ Նկատ. %-ով	01.01.16թ.	01.01.16թ 01.01.15թ Նկատ. %-ով	01.01.16թ.	01.01.16թ 01.01.15թ Նկատ. %-ով	01.01.16թ.	01.01.16թ 01.01.15թ Նկատ. %-ով
Գեղարքունիք	125044	103.4	61045	104.2	15191	119	113755	102.1	1494	94.1
Լոռի	81769	100.9	40864	102.9	15358	140.2	37919	99.1	2573	104.9
Տավուշ	37835	101.9	17738	101.1	20069	120.3	17594	103.3	2055	101.9
Ընդամենը	701535	101.9	318623	101.5	174776	122.7	778069	104.3	11402	99.8

85. 01.01.2016թ. դրությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 1.9%-ով, իսկ ոչխարների ու այծերի գլխաքանակը՝ 3.3%-ով:

86. Մարզում 2016թ.-ի հունվար-դեկտեմբեր ամսին իրացվել է շուրջ 10.5 հազար տոննա (կենդանի զանգվածով) միս (աճը՝ 3.0%), արտադրվել է 43.3 հազար տոննա կաթ (աճը՝ 2.7%) և 50.6 մլն հատ ձու (աճը՝ 2.4%):

Աղյուսակ 21. Անասնաբուծական արտադրանքի արտադրությունը[1] հանրապետությունում, 2016թ. հունվար-դեկտեմբեր

	Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)[2] , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2016թ. հունվար-դեկտեմբեր	2016թ. հունվար - դեկտեմբերը 2015թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ, %	2016թ. հունվար-դեկտեմբեր	2016թ. հունվար - դեկտեմբերը 2015թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ, %	2016թ. հունվար-դեկտեմբեր	2016թ. հունվար - դեկտեմբերը 2015թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ, %
Գեղարքունիք	30.1	107.8	141.8	105	68.4	114
Լոռի	21.7	110.2	94.6	104.8	49.5	103.6
Տավուշ	**10.5**	**103**	**43.3**	**102.7**	**50.6**	**102.4**
ՀՀ	187.1	106.2	754.2	103.5	694.6	105.3

3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

87. 2015թ. դրությամբ ՀՀ Տավուշի մարզում գործում էր 59 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 3406 սանով՝ 16 նախակրթարան՝ 228 սաներով և 43 մանկապարտեզ՝ 3178 սանով: 2011թ. մինչ 2015թ. նախադպրոցական հաստատությունների թիվն ավելացել է 13-ով, 46-ից դառնալով 59: Միևնույն ժամանակ, վերլուծելով մեկ բնակչի հաշվով նախադպրոցական հաստատությունների վիճակը մարզում պարզ է դառնում, որ մարզը ապահովվածությունը նախադպրոցական հաստատություններով ավելի քան 1.5 անգամ գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը և շուրջ կրկնակի անգամ գերազանցում է հարակից մարզերի որոշ ցուցանիշներին:

88. ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում 2011-2015 ուս.տարիների ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը մնացել է անփոփոխ: ՀՀ Տավուշի մարզում գործում է 82 դպրոց, որից 4-ը՝ ավագ, 52-ը՝ միջնակարգ, 2-ը՝ վարժարան, 24-ը՝ հիմնական: 2016-2017 ուսումնական տարում մարզում աշակերտների թիվը կազմել է 15832: ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում նկատվել է աշակերտների թվի նվազում՝ ՀՀ Տավուշի մարզում՝ 7% (1189), ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 12 % (4002): Թվի նվազումը պայմանավորված է արտագաղթով, ծնելիության ցածր մակարդակով: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը հանրակրթական ուսումնական ոլորտում մարզը նույնպես ավելի լավ է ապահովված ինչպես մանկավարժներով, այնպես էլ դասարաններ հաճախող աշակերտների թվով և այլն: Մարզի դպրոցների առաջինից չորրորդ դասարանի և Բերդի տարածաշրջանի մանկապարտեզների երեխանները 2010 թվականից ընդգրկված են ՄԱԿ-ի պարենի ծրագրում: Մարզի ցուցանիշները համեմատական են հարակից մարզերի հետ: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցները ընդգրկված են ներառական կրթության ծրագրում:

89. Մարզի որոշ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված համակարգերով ապահովման խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում երեխաների և դեռահասների առողջության վրա: Մարզի դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում գործում են կենտրոնացված ջեռուցման համակարգեր, բացառությամբ՝ Այգեձորի, Չինարի, Նորաշենի, Չորաթանի, Չինչինի, Նավուրի, Վ.Կ. Աղբյուրի, Արծվաբերդի, Իծաքարի, Բերդավանի, Զորականի, Կողբի թիվ 2, Այրումի, Արճիսի, Լճկաձորի, Բագրատաշենի թիվ 1, 2, Դեբեդավանի, Պտղավանի, Դեղձավանի, Դովեղի, Բարեկամավանի, Ոսկևանի միջնակարգ դպրոցները և Բերդի թիվ 3, Այգեձորի, Նորաշենի, Չորաթանի, Նավուրի, Վարագավանի, Արծվաբերդի, Նոյեմբերյանի թիվ 1, 2, Կողբի թիվ 1, 2, Բերդավանի, Այրումի, Դեբեդավանի, Բագրատաշենի, Կոթիի, Արճիսի, Հաղթանակի, Պտղավանի, Ջուջևանի, Ոսկևանի նախադպրոցական ուսումնական հաստատությունները ունեն վառարանային ջեռուցում:

90. 2017 թվականի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող մեկ (1) նախնական (արհեստագործական) և վեց (6) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցից 3-ում իրականացվում է նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագիր: 2015-2016թթ. ուսանողների թվաքանակը կազմել է 6874:

91. ՀՀ Տավուշի մարզում գործում է պետական ԲՈՒՀ-երի 2 մասնաճյուղ՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղը: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղում սովորում է 27 ուսանող: Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը ՀՀ Տավուշի մարզում ունի ռազմավարական նշանակություն, քանի որ նպաստում է երիտասարդների մարզում մնալուն և որոշ չափով ներքին միգրացիան կանխելուն: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում է 4 ֆակուլտետ՝ հումանիտար, տնտեսագիտության, բնագիտության, կիրառական արվեստի և հեռակա ուսուցման բաժին (1723 ուսանող): 2016-2017 ուստարում մասնաճյուղ է ընդունվել 394 ուսանող: Ընդ որում, ամենամեծ թիվը կազմում է հումանիտար ֆակուլտետի ուսանողները:

92. ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1191-Ն որոշմամբ հաստատվել է բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկը, որով ՀՀ բուհերում իրականացվում է ընդունելություն:

93. Զբաղվածության տարածքային կենտրոններում գործատուների հայտի հիման վրա իրականացվում են մասնագիտական վերապատրաստումներ՝ վերապատրաստվողների 50%-ին աշխատանք տրամադրելու պայմանով: Հիմնականում վերապատրաստումներն իրականացվել են հետևյալ մասնագիտությունների գծով՝ բանվոր, վաճառող, հացթուխ, կահույքագործ, գործավար-օպերատոր, դերձակ: Համապատասխան վերապատրաստումներն իրականացվում են մարզի քոլեջներում:

94. Միջին մասնագիտական կամ բարձագույն կրթություն ստանալով և համապատասխան աշխատանք չգտնելու պատճառով կատարվում է երիտասարդ մասնագետների արտագաղթ: Այսինքն, անձն ապահովելով իր կրթական իրավունքը, չի կարողանում դրա արդյունքում ձեռք բերած գիտելիքները և կարողություններն իրացնել աշխատաշուկայում:

3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

95. ՀՀ Տավուշի մարզում տնային տնեսությունների թիվը 2016թ. հունվարի 1–ի դրությամբ կազմում է 37746, որից 15165ը (40%) մարզի քաղաքային համայնքներում: Մարզի տնային տնտեսությունները բավականին ապահովված են բնակ մակերեսով, բնակ մակերեսով ապահովման մակարդակը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

Աղյուսակ 22. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016. հունվարի 1-ի դրությամբ, (մ²)

	Ընդամենը			այդ թվում՝ համայնքներում					
				քաղաքային			**գյուղական**		
	2013	**2014**	**2015**	**2013**	**2014**	**2015**	**2013**	**2014**	**2015**
ՀՀ	**30.9**	**31.4**	**31.6**	**26.2**	**26.7**	**26.9**	**39.0**	**39.5**	**39.8**
Գեղարքունիք	30.8	31.2	31.4	37.8	38.6	39.0	27.7	28.0	28.2
Լոռի	38.4	39.7	40.2	37.2	38.5	38.8	40.1	41.6	42.1
Տավուշ	**35.9**	**36.1**	**36.4**	**28.5**	**28.6**	**28.9**	**41.3**	**41.6**	**41.9**

Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 171: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf

96. ԱՎԾ տվյալների հիման վրա մարզում կան 840 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնց մակերեսը կազմում է 617109 ք.մ. որտեղ բնակվող բնակիչների թիվը կազմում է 10489 մարդ: Բազմաբնակարան բնակելի շենքերից 285 բազմաբնակարան շենք գտնվում են քաղաքային համայնքներում և նրանց կեսից ավելին ունեն հիմնանորոգման կարիք: Բազմաբնակարան շենքերը, որոնք հիմնականում կառուցվել են անցյալ դարի 70-80-ականներին և այդ պատճառով նրանց մաշվածության աստիճանը բարձր է: Մարզի 25 համայնքներում առկա են բազմաբնակարան բնակելի շենքեր:

97. Մարզում աղքատության ու ծայրահեղ աղքատության մակարդակը աճել է համեմատ 2012թ. անկախ ընդհանուր հանրապետությունով աղքատության նվազման միտման: Վերլուծելով մարզի բնակչության եկամտի աղբյուրները պարզ է դառնում, որ մարզի բնակչությունը հիմնականում արտադրված գյուղատնտեսական ապրանքները արտադրում է սեփական սպառման համար այլ ոչ թե շուկայում վաճառքի համար, ինչի պատճառներից մեկը կարող է լինել թեր զարգացած մթերման ենթակառուցվածքները: Միևնույն ժամանակ մարզի բնակչության կողմից ստացված տրանսֆերտները գրեթե 4 անգամ ավելի քիչ են, քան միջին հանրապետական ցուցանիշը:

98. Ընտանեկան նպաստ և սոցիալական նպաստներ ստացող ընտանիքների թիվը աճել է տարեց-տարի և 2015թ. հասել է 5266 կամ համայնքի տնային տնտեսությունների շուրջ 14%-ով: Հրատապ օգնություն ստացողների և կենսաթոշակառուների թիվը աննշան նվազել է 2012 թվականի հետ համեմատ: Մարզում բնակվող միայն տարեց թոշակառուներից կազմված ընտանիքների համար չկան ցերեկային խնամքի կենտրոններ: Միևնույն ժամանակ առկա են շուրջ 70 փախստական ընտանիքների կացարանով ապահովման հարցը:

99. Մշակույթի մատչելիություն: ՀՀ Տավուշի մարզում գործում են արվեստի 1 պետական քոլեջ (նախարարության ենթակայությամբ), 11 երաժշտական, գեղարվեստի և արվեստի 5 դպրոց, 32 մշակույթի տուն և ակումբ, 1 մարզային և 65 քաղաքային ու գյուղական գրադարան, 4 զբոսայգի, 1 մշակույթի և ժամանցի կենտրոն (<<Ավանդույթ>> ՓԲԸ), 2 պատկերասրահ (Իջևան, Դիլիջան), 4 ժողովրդագրական նվագարանների համույթ, 4 թանգարան: Կան պատմամշակութային և տեղական նշանակության հուշահամալիրներ, հուշակոթողներ, հուշարձաններ և այլն: Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ

հուշարձանների ցուցակներն ընդգրկում են 24152 հուշարձան, ինչպես նաև <<Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների>> ցուցակը, որն ընդգրկում է 18935 հուշարձան՝ 6145 պահպանական միավորով, ըստ որի ՀՀ Տավուշի մարզի ցուցակը ներառում է 1996 հուշարձան՝ 797 պահպանական միավորով:

Աղյուսակ 23. Թանգարանների և գրադարանների այցելուների վերաբերյալ

	Թանգարաններ		Գրադարաններ	
	2014	2015	2014	2015
այցելուների թիվ	6.947	6.973	255.8	272.1
միջոցառումների թիվ	42	45	491	446
ֆոնդ	8.423	8.423	826.400	838.900
ֆոնդի համալրում	-	30	255.8	272.1

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. (http://armstat.am/am/?nid=82&id=1834)

Աղյուսակ 24. Մարզի մշակութային օբյեկտները, քանակները և գտնվելու վայրերը:

Ոլորտը	Տարածաշրջանը				
	Դիլիջան	Իջևան	Նոյեմբերյան	Բերդ	Ընդամենը
Թանգարաններ	2 (Դիլիջան)	1 (Իջևան)	0	1(Բերդ)	4(քաղ.)
Գրադարաններ	1–ԳԿՀ (9 մասնաճյուղ. Դիլիջան–6, Հաղարծին-1, Թեղուտ-1, Աղավնավանք–1)	15 (Իջևան-1 մարզային, գ. համայնք-14)	11 (Նոյեմբերյան-2 Այրում-1 գ. համայնք-9)	14 (Բերդ-1, գ. համայնքային-13)	41 (6-ը քաղաք., 35-ը գյուղ.)
Երաժշտական դպրոցներ	2 (Դիլիջան-1, Հաղարծին-1)	3 (Իջևան-1, գ. համայնք-2)	5 (Նոյեմբերյան-1, Այրում-1, համայնք-3)	1 (Բերդ)	11 (5-ը քաղ., 6-ը գյուղ.)
Արվեստի դպրոցներ		2(Իջևան-1, Ազատամուտ-1)			2 (1-ը քաղ. 1-ը գյուղ)
Մշակույթի տներ, ակումբներ	2 (Դիլիջան-1, Հաղարծին-1)	10 (Իջևան-1, գ. համայնքային -9)	8 (Նոյեմբերյան-1, Այրում-1, գ. համայնք 6)	12 (Բերդ-1, գ. համայնք-11)	32 (6-ը քաղ., 26-ը գյուղ.)
Մանկապատանեկան թատրոն		1 (Իջևան)	2 (Նոյեմբերյան-1, Կողբ-1)	1 (Բերդ)	4 (3-ը քաղ., 1-ը գյուղ.)
Մարզամշակութային կենտրոն			1 (Նոյեմբերյան)		1 (քաղ.)
Երաժշտական քոլեջ	1 (Դիլիջան)				1 (քաղ.)
Գեղարվեստի դպրոց	1 (Դիլիջան)		1 (Նոյեմբերյան)	1 (Բերդ)	3 (քաղ.)
Պատկերասրահ	1 (Դիլիջան)	1 (Իջևան)			2 (քաղ.)
Մշակույթի և ժամանցի կենտրոն		1 (Իջևան)			1 (քաղ.)
Զբոսայգի	1 (Դիլիջան)	1 (Իջևան)	1 (Նոյեմբերյան)	1 (Բերդ)	4 (քաղ)

100. Համայնքային բյուջեների սղության պատճառով նորմալ չեն շահագործվում գրադարանները, գյուղական մշակույթի տները կամ բացակայում են կամ լինելու դեպքում խմբակներ չեն կազմակերպվում: Գյուղական համայնքների փոքրաքանակությունը, քաղաքային համայնքներից հեռու գտնվելը, տրանսպորտային երթուղիների ոչ նորմալ աշխատանքը, նմանատիպ այլ գործոններ ազդում են մարզի մշակութային կյանքի և հասանելիության վրա:

101. Առողջապահության մատչելիություն: Մարզի առողջապահական համակարգում գործում են 29 բժշկական հաստատություններ՝ 4 բժշկական կենտրոն (ԲԿ ՓԲԸ), 3 առողջության կենտրոն (ԱԿ, ՊՈԱԿ), 22 առողջության առաջնային պահպանման կենտրոններ (ԱԱՊԿ), որից 3-ը համայնքային ենթակայության են՝ՀՈԱԿ, 19-ը ՊՈԱԿ-ներ են: Գործում են նաև 3 մասնավոր բժշկական հաստատություններ: Մարզի բժշկական հաստատություններում աշխատում են 246 բժիշկ, որոնք սպասարկում են կցագրված 122050 բնակչի:

102. Մարզի ապահովվածությունը բժշկական կադրերով (19.6 բժիշկ 10 000 բնակչի հաշվով) ավելի քան կրկնակի ցածր է քանի միջին հանրապետական ցուցանիշը (43.7 բժիշկ 10 000 բնակչի հաշվով), սակայն ոչ զգալի չափով գերազանցում է ՀՀ Գեղարքունիքի մարզի ցուցանիշը: Միջին բուժանձնակազմի հետ վիճակն ավելի լավ է, այստեղ տարբերությունը մարզի (43.1 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) և հանրապետության (58.8 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) ցուցանիշների մեջ այսքան ցայտուն չէ:

103. Դժվարամատչելի է ատամնաբուժական և ակնաբուժական ծառայությունները, հատկապես սահմանային և գյուղական համայնքներում:

104. Հիվանդանոցային մահճակալների քանակով մարզը կրկին շուրջ կրկնակի անգամ զիջում է միջին հանրապետական ցուցանիշին, մարզում առկա է 20.6 մահճակալ 10 000 բնակչի համար, հանրապետության 41.8 դիմաց:

105. Բնակչությանը որակյալ բժշկական սպասարկում ապահովելու նպատակով ՀՀ կառավարության և առողջապահության նախարարության անմիջական նախաձեռնությամբ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից վերջին 5 տարիների ընթացքում իրականացվել են մարզի 6 բժշկական հաստատությունների հիմնանորոգումներ և ընթացիկ նորոգումներ, վերազինվել են արդի պահանջներին համապատասխան սարքավորումներով:

106. Մասնագետների բացակայությունը ստիպում է մարզի բնակիչներին խնդիրների առաջացման դեպքում այցելել մայրաքաղաքի հիվանդանոցներ, որը ստեղծում է հավելյալ ծախսեր և մատչելի չէ մարզի բոլոր բնակչության համար: Մարզում 16 հավելյալ նեղ մասնագետ-բժիշկների առկայության դեպքում այսպիսի այցերի քանակը կարելի էր կտրուկ կրճատել, բացի այդ հեռավոր համայնքների այցելությունների համար անհապաղ անհրաժեշտ է համալրել շտապօգնության ծառայությունը 4 ամենագնաց մեքենաներով:

107. Գենդերային խնդիրներ: 2015թ. ՄԱԿ-ի կողմից հռչակված Կայուն զարգացման օրակարգում գենդերային հավասարությունը դիտարկվում է ոչ միայն որպես Կայուն զարգացման 17 նպատակներից մեկը, այլ որպես անհրաժեշտ նախապայման զարգացման բոլոր գործընթացներում: Այստեղից էլ տրամաբանորեն բխում է ռազմավարական և զարգացման ծրագրերի գենդերային ուղղորդման անհրաժեշտությունը, ինչը կանանց և տղամարդկանց միջև առկա անհավասարությունը հաղթահարելու հիմնական ռազմավարությունն է հանդիսանում սոցիալ տնտեսական կյանքում:

3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

108. Օդային ավազան: Մարզի օդային ավազան են տարեկան արտանետվում շուրջ 19.8 հազ. տոննա աղտոտող նյութեր, որը կազմում է Հանրապետության ընդհանուր գրանցված արտանետումների 15.4%-ը կամ գրեթե 4 անգամ գերազանցում է միջին Հանրապետական ցուցանիշը:

Աղյուսակ 25. Մթնոլորտային տեսակարար արտանետումները

	1 բնակչի հաշվով, կգ			1 քառ. կմ-ի հաշվով, կգ , առանց Սևանա լճի հայելու		
	2013	2014	2015	2013	2014	2015
ՀՀ	39.6	42.6	42.9	4204.6	4510.5	4528.7
Գեղարքունիք	10.80	25.30	12.50	625.50	1448.60	713.20
Լոռի	183.40	191.50	206.90	11232.50	11564.20	12336.20
Տավուշ	**133.1**	**156.5**	**157.5**	**6299.5**	**7355.1**	**7346.3**

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ., էջ 161 (http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

109. Մարզի տարածքում գործող կազմակերպությունները չեն իրականացնել վնասակար նյութերի որսման համար և ոչ մի գործողություն (այս պնդումը ճիշտ է նաև 5 այլ մարզերի համար): Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 2 անգամ:

110. Ջրային ավազան: ՀՀ Տավուշի մարզը հարուստ է ջրային ռեսուրսներով, բավական է նշել, որ մարզով է հոսում ամենաջրառատ գետը՝ Դեբեդը, ապա Աղստևը և տասնյակ միջին և փոքր գետեր և նրանց սնող բազմաթիվ վտակներ: Գետերը սնող վտակների գերակշռող մասը կարելի է դիտարկել որպես խմելու ջուր: Մարզի ջրային ավազանի մաքրության հետ կապված խնդիրները պայմանականորեն բաժանվում են երկու մասի, նրանք, որոնք առաջանում են մարզի տարածքում, հիմնականում կապված են կոյուղու միացմանը հոսող գետերին և գյուղատնտեսության գործունեության արդյունքում ստեղծված կեղտաջրերով, իսկ մարզից դուրս առաջացող խնդիրներից է մարզով անցնող հանրապետության ամենաջրառատ Դեբեդ գետն է: Այն աղտոտվում է վնասակար նյութերով և ծանր մետաղներով Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա քաղաքների և Թեղուտի լեռնամետալուրգիական գործարանների արտանետումներով: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2013-2015թթ. իրականացված մոնիտորինգի արդյունքներով Դեբեդ գետի ջուրը գետաբերանում ունի 5-րդ ամենաբարձր դասի աղտոտվածություն:

111. Մարզում օգտագործվող ջրի քանակը կազմում է շուրջ 12.2 մլն խմ, որը մեկ շնչի հաշվով շուրջ 8 անգամ ավելի քիչ է քան հանրապետական միջինը: Միևնույն ժամանակ մարզում օգտագործվող ջրի գերակա մեծամասնությունը՝ շուրջ 83% օգտագործվում է գյուղատնտեսության համար, արդյունաբերական նպատակների համար օգտագործվում է ջրի շուրջ 5.7%, գյուղատնտեսության և արդյունաբերության համար օգտագործվող ջրի քանակը շուրջ 10 անգամ ցածր է հանրապետական միջինից, խմելու համար օգտագործվում է ջրի 11% կամ տարեկան 1.4 մլն խմ, այս դեպքում օգտագործման ծավալները ցածր են հանրապետական միջին ցուցանիշներից շուրջ 3 անգամ:

112. Մարզում 2015թ. նկատվել է կեղտաջրերի արտահոսքի զգալի կրճատում, եթե 2014թ. ամբողջ կեղտաջրերը (1.4 մլն մ^3) լցվում էին հոսող գետերը, ապա 2015թ. այս քանակը հասել է 1.5 մլն մ^3 և շուրջ 0.4 մլն մ^3 ոչ բավարար կերպով մաքրվում է: Ջրային ավազանի այս վիճակը խնդիրներ է առաջացնում մարզի ռեկրեացիոն գրավչությունը բարձրացնելու համար:

113. Հող, պահպանվող տարածքներ, տեսակներ և կենսաբազմազանություն: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ ճիշտ կառավարման պատճառով առաջանում է էրոզիա, որոշ հատվածներում առաջ են եկել դեգրադացման խնդիրներ, որի կանխարգելման նպատակով վերջին տարիներին իրականացվել են որոշակի աշխատանքներ: Մարզում դեռևս մնում է չլուծված աղբի հավաքման և պատշաճ տեղադրման հարցը: Այն հիմնականում իրականացվում է քաղաքային համայնքներում, իսկ տեղադրումը՝ հիմնականում անկանոն: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր, մեծ վնաս հասցնելով ինչպես աղբավայրի այնպես ել շրջակա հողտարածքներին:

114. Մարզում են գտնվում «Դիլիջան» ազգային պարկը, շուրջ 33 765 հազար հա տարածքով, Ախնաբադի կենու պուրակ, Արջատխլենու, Իջևանի, Զիկատարի և Գանձաքարի արգելավայրերը: Մարզի տարածքում գործում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ Սևքարի, Իջևանի, Նոյեմբերյանի և Արծվաբերդի դուստր անտառտնտեսությունները», ինչպես նաև «Բերդի սորաններ» դենդրոպարկը:

1) «Մշակվել է «Դիլիջան» ազգային պարկի 2016-2025թթ. կառավարման պլանի նախագիծը, որի աշխատանքները ֆինանսավորվել է Կովկասի բնության հիմնադրամի (CNF) կողմից:
2) Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (WWF-Armenia) համագործակցելով ՀՀ բնապահպանության և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների հետ FLEG ծրագրի շրջանակներում, Եվրոմիության ֆինանսավորմամբ 2015թ. նոյեմբերից սկսել է իրականացնել «Իջևանի» պետական արգելավայրի կառավարման պլանի մշակման աշխատանքները:
3) 2016 թվականի դեկտեմբեր ամսին մեկնարկել է «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերի մշտադիտարկում» ծրագիրը, որը ֆինանսավորել է Կովկասի բնության հիմնադրամը (CNF) և իրականացվելու է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից՝ համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

115. «Իջևանի անտառային» արգելավայրի ստեղծումը նախատեսվել է իրականացնել ՀՀ Տավուշի մարզում առկա երեք անտառային արգելավայրերի («Իջևանի», «Գանձաքարի» և «Արջատխլենու») սահմանների վերանայման և օպտիմալացման աշխատանքների արդյունքում: Այդ աշխատանքներն իրականացվել են Եվրամիության կողմից ֆինանսավորվող և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) կողմից իրականացվող «Իջևանի» արգելավայրի ստեղծման ու գործունեության համար պայմանների ապահովման ծրագրի շրջանակներում, որը մեկնարկել է 2013 թվականից:

116. Մարզի տարածքում վայրի կենդանիներից դեռևս պահպանվում են արջ, այծյամ. եղջերու, վայրի խոզ, մացառախոզ, շնագայլ, գայլ, փորսող, կզաքիս,վայրի կատու,եղեգնակատու,լուսան, որոնցից այծյամի և եղջերուի պահպանման և զարգացման նպատակով Դիլիջանի Ազգային պարկի տարածքում 2016թ-ից մեկնարկել է ծրագիր:

117. Մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են անտառային էկոհամակարգերի գերշահագործման հետ, որի պատճառով խաթարվել է անտառի ինքնավերականգնման ունակությունը և դեգրադացվել են անտառային էկոհամակարգերը:

118. Մարզում անտառային ռեսուրսների պահպանության հարցը փոխկապակցված է հողերի, կենսաբազմազանության, ինչպես նաև ջրային ռեսուրսների պահպանության հետ: Ապօրինի անտառհատումների հետևանքով ակտիվացել են հողերի էրոզիան երևույթները և սողանքները: Մարզի 25 համայնքներում առկա են սողանքային գոտիներ,սողանքների, սելավների և ջրհեղեղների հետևանքով հասցվող վնասի նվազեցման համար պետք է ուսումնասիրվեն առավել խոցելի տարածքները:

119. Էներգախնայողություն: ՀՀ Տավուշի մարզում ՀՀ կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ (Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ), ՎիվաՍել ՄՏՍ. Քաղաքապետների դաշինք և այլն) հանրային նշանակության օբյեկտներում իրականացրել և շարունակում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

120. Էներգախնայողության նպատակով ՀՎԷԷՀ «էներգախնայողության ծրագրի» շրջանակներում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ.

1) Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցում էներգախնայողության միջոցառումներ,
2) Իջևանի փողոցային լուսավորում,
3) Դիլիջանի փողոցային լուսավորում,

121. ՎիվաՍել ՄՏՍ-ի «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակներում ևս իրականացվել են աշխատանքներ.

1) Արծվաբերդի մարզադպրոցի էներգախնայողության միջոցառումներ,
2) Բերդավան համայնքի փողոցային լուսավորում,
3) Ջուջևան համայնքի վարչական շենքում էներգախնայողության միջոցառումներ:

122. Վերջին տարիների **կլիմայական փոփոխությունները** բացասական ազդեցություն է թողել նաև ՀՀ Տավուշի մարզի վրա, արդյունքում հաճախակի են դարձել երկարատև և հորդառատ անձրևները, վաղ գարնանային ցրտահարություններն ու կարկտահարությունները, ինչպես նաև տևական շոգ եղանակները:

3.12 ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

123. ՀՀ Տավուշի մարզի տարածքային կառավարման մարմինը ՀՀ Տավուշի մարզպետարանն է. որը կազմված է մարզպետից և մարզպետարանի աշխատակազմից: Մարզպետարանի աշխատակազմը ունի 7 վարչություններ, 8 առանձնացված բաժիններ և 4 տարածքային ՍԱՏԳ-ներ, որոնք ևս ունեն բաժինների կարգավիճակ: Բաժինները կազմված են 2-6 հաստիքներից:

Գծապատկեր 10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի կառուցվածքը



124. Մարզպետարանի աշխատակազմի 6 քաղաքացիական ծառայողներ ունեն միջնակարգ մասնագիտական, իսկ մնացածը բարձրագույն կրթություն:

125. Մարզպետարանում գործում է նաև ուսուցման կենտրոնը. որտեղ վերապատրաստվում են համայնքների ղեկավարներ, ավագանու անդամներ, համայնքային ծառայողներ և կազմակերպվում տարբեր սեմինար քննարկումներ:

126. Մարզում իրականացվող գործընթացներում մշտապես ներգրավվում են հասարակական կազմակերպությունները, համայնքների միությունները, քաղաքացիական ակտիվ խմբերը, ինչպես նաև տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունները, ՓՄՁ ԶԱԿ մարզային մասնաճյուղը, Տավուշի մարզի առևտրաարդյունաբերական պալատը, ինչպես նաև զբաղվածության տարածքային կենտրոնները և պետական քոլեջները:

127. ՀՀ Տավուշի մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության հիմնարկների 2015թ. ֆինանսավորումը կազմել է 6708.34 մլն ՀՀ դրամ:

128. 2015 թվականին մարզում եղել է 62 համայնք, որից 5-ը քաղաքային: Խոշորացման գործընթացի արդյունքում ներկայումս մարզում առկա է 40 համայնք: Ավագանու անդամների ընդհանուր թիվը 286 են:

129. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում 29.12.2016թ.-ի դրությամբ համայնքային ծառայողների փաստացի թիվը 318 է, որից 60-ը զբաղեցնում են համայնքային ծառայության գլխավոր, 60-ը առաջատար և 198 կրտսեր պաշտոններ:

130. ՀՀ Տավուշի մարզի խոշորացված Դիլիջան համայնքում (ընդգրկվել են նաև Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան համայնքները) անցկացվել են համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ: Հետևաբար, սահմանված կարգով նշված նախկին համայնքապետարանների աշխատակազմերը լուծարվել են և ներկայումս ընթացքի մեջ է նորաստեղծ աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու գործընթացը: Արդեն անվանացանկով հաստատված 39 պաշտոններից մրցույթով զբաղեցվել են 19-ը: Համայնքների խոշորացման արդյունքում ակնկալվում է միջոցների խնայողություն, նոր ներդրումային ծրագրերի ներգրավում: Խոշորացման գործընթացը շարունակվում է: Նոյեմբերյանի տարածաշրջանում ձևավորվել է երեք փունջ, իսկ Բերդի և Իջևանի տարածաշրջաններում այն կիրականացվի առաջիկայում, բարեփոխման ավարտին մարզում կլինի 6 համայնք, 66 բնակավայր:

131. Ներկայումս գյուղական 35 համայնքներում աշխատող համայնքային ծառայողների քանակը 218, այսինք միջինը 6՝ մեկ համայնքի հաշվով, դրանցից 32 ունեն բարձրագույն, իսկ 186 միջին մասնագիտական կրթություն: Գյուղական համայնքների ընդհանուր բյուջեի փաստացի կատարված ծախսերը 2015թ. կազմում են 2.1 մլրդ. ՀՀ դրամ, որից ներդրումային ծախսերը 178 մլն ՀՀ դրամ և վարչական ծախսերը 1.9 մլրդ. ՀՀ դրամ: Գյուղական համայնքների աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերը 2015 թվականին կազմել են 893 մլն.ՀՀ դրամ:

132. Մարզի քաղաքային համայնքներում աշխատող համայնքային ծառայողների քանակը 100, այսինք միջինը 20՝ մեկ համայնքի հաշվով, դրանցից 46 ունեն բարձրագույն. իսկ 54-ը միջին մասնագիտական կրթություն: Քաղաքային համայնքների ընդհանուր բյուջեի փաստացի կատարված ծախսերը 2015թ. կազմում են 1.6 մլրդ. ՀՀ դրամ, որից ներդրումային ծախսերը 215 մլն ՀՀ դրամ և վարչական ծախսերը 1.4 մլրդ. ՀՀ դրամ: Քաղաքային համայնքների աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերը 2015 թվականին կազմել են 313 մլն ՀՀ դրամ:

133. 2015-2016 թվականներին ՀՀ Տավուշի մարզում իրականացվել են մարզպետարանի և մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի կարողությունների զարգացմանը ուղղված հետևյալ ծրագրեր, որի շրջանակներում իրականացվել է մարզպետարանի և համայնքային ծառայողների վերապատրաստում:

3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

134. Մարզում առկա են ինչպես զարգացման մեծ ներուժ ունեցող համայնքներ, որոնք պահանջում են առավել բարձր ուշադրություն, քանի որ կարող են հանդիսանալ այն տարածքները, որոնց զարգացումը կնպաստի մարզի ընդհանուր տնտեսական աճին, մասնավորապես Դիլիջանի տարածաշրջանը, այնպես էլ թեր զարգացած և խնդրահարույց տարածքներ, որոնք ետ են մարզի զարգացման տեմպերից, մասնավորապես սահմանամերձ և փոքր համայնքները, ինչպես նաև այն համայնքները, որոնք հիմնվել են մեծ գործարանների բազայի վրա:

135. Դիլիջանի տարածաշրջանն ունի զարգացման մեծ ներուժ, արդեն իսկ այստեղ առկա են հյուրանոցառեստորանային 36 համալիրներ, 45 հյուրատներ, 179 առևտրի օբյեկտներ, 8 կենցաղային սպասարկման օբյեկտներ, միջազգային դպրոցը, ԿԲ-ի ուսումնական կենտրոնը և այլն, որոնք մեծ ներուժ են հանդիսանում տարածաշրջանի զարգացման համար: Լուծման խնդիր է նաև ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո մասնագետի համապատասխան կազմակերպություն գործուղելու պրակտիկայի վերականգնելը: Հատկապես, նկատի ունենք մանկավարժներին, քանի որ ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների դպրոցները կարիք ունենալով համապատասխան մասնագետների՝ դրա արդյունքում կհամալրեն այդ բացը: Ընդ որում՝ հատկապես սահմանամերձ դպրոցներ գործուղված մասնագետներին պետք է ապահովել արտոնյալ պայմաններով (օրինակ՝ աշխատավարձի հավելավճար):

136. Հատուկ զարգացման կարիքներ ունեն Ադրբեջանի հետ սահմանամերձ գոտիները, որտեղ ներդրողների համար ստեղծված պայմանները (հարկային բարենպաստ ռեժիմ և այլն) ստեղծել են որոշակի աշխատատեղեր, սակայն դեռևս չեն տալիս սպասվող աճ: Այսպիսի բնակավայրեր են ՀՀ Տավուշի մարզի հետևյալ բնակավայրերը՝ Ներքին Կարմիր աղբյուր, Ոսկեվան, Չորաթան, Կողբ, Վազաշեն, Բերքաբեր, Չինարի, Արծվաբերդ, Ծաղկավան (Իջևանի շրջան), Մոսեսգեղ, Դովեղ, Պառավաքար, Բերդավան, Բարեկամավան, Կոթի, Բաղանիս, Սարիգյուղ, Այգեձոր, Կիրանց, Այգեպար, Սևքար, Այգեհովիտ, Ոսկեպար, Վերին Կարմիր աղբյուր, Բերդ, Ազատամուտ, որտեղ բնակավայրերում բնակվում է ՀՀ Տավուշի բնակչության 36%:

137. Առավել խնդրահարույց են հանդիսանում գործարանամերձ ավանները, որտեղ գործարանների կանգի կամ թերբեռնվածության պատճառով չկան բավականին աշխատատեղեր և չկան նաև գյուղատնտեսական հողեր, որոնց մշակությամբ բնակչությունը կարող է հայթայթել իր ապրուստի միջոցները: Այսպիսի բնակավայրեր են ՀՀ Տավուշի մարզի Այրում, Ազատամուտ, Այգեպար բնակավայրերը: Այս բնակավայրերում բնակվում է ՀՀ Տավուշ մարզի բնակչությունից 6170-ը, որից կին՝ 3207 կամ մարզի բնակչության 5 %-ը:

138. Եվրոմիության, Հայաստան Համահայկական Հիմնադրամի, ՀՀ կառավարությանն առընթեր Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ-ի (IFAD), Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, Վորդ Վիժն <<Հայաստան>> Կարմիր խաչ, Հիմնատավուշ հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի(UNDP), UNWFP, Դիակոնիա ԲՀԿ-ի, USAIDI, OXFAM, Օքսիջեն. Ամերիկայի ՀՕՖ-ի, Հույսի կամուրջ և մի շարք այլ տեղական ու միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների կողմից ՀՀ Տավուշի մարզում իրականացվել և իրականացվում են մեծածավալ աշխատանքներ, որոնք լուրջ ազդեցություն են ունենում մարզի սոցիալ տնտեսական զարգացման վրա:

139. Չնայած կատարվող աշխատանքներին կան դեռևս բազմաթիվ չիրականացված ծրագրեր, որոնք համակարգային լուծում են պահանջում:

IV. ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

140. Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) վերլուծությունն ապահովում է ՀՀ Տավուշի մարզի ներկայիս իրավիճակի ամփոփ նկարագիրը:

Աղյուսակ 26. Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն (SWOT)

Ուժեղ կողմեր/հնարավորություններ	Թույլ կողմեր/սպառնալիքներ
1. Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում	
• Դիլիջանը և Իջևանը, որպես աճի բևեռներ • Գյուղատնտեսական հողերի բերքատվության բարձ մակարդակ	• Միգրացիայի առկայություն • Ծերացող բնակչություն • Փոքր քաղաքների անկման միտում • Նոսր բնակեցվածություն • Արտագաղթի մեծ միտվածություն • Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանների վատ վիճակ, բացակայություն • Գյուղատնտեսական հողերի թերի օգտագործում • Անտառային պաշարների գերօգտագործում վառելիքի համար
• Լավ բնական պայմաններ զբոսաշրջության համար (այդ թվում՝ անտառներ, ջրամբարներ, գեղատեսիլ վայրեր) • Բնական պաշարների, հատկապես հանքանյութերի առատություն • Ջրային պաշարների ինքնաբավություն • Հարուստ անտառածածկույթ՝ ՀՀ անտառների 38 % • Գյուղատնտեսության զարգացման համար բարենպաստ պայմաններ • Լավ բնական պայմաններ զբոսաշրջության համար, այդ թվում անտառներ, ջրամբարներ, գեղատեսիլ վայրեր, բնության հուշարձաններ	• Դժվարանցանելի լեռնային ռելիեֆ • Հանկարծակի կլիմայական փոփոխություններ • Սողանքային գոտիների առկայություն • Սեյսմիկ ռիսկեր • Սահմանային հակամարտության • Այլ բնական աղետների ռիսկ
2. Տրանսպորտ, կապ և տեղեկատվական հասարակություն	
• Միջպետական ճանապարհների և երկաթուղային տրանզիտի առկայություն • Մարզի ամբողջ տարածքում ինտերնետի և կապի հասանելիություն	• Միջհամայնքային ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ • Տրանսպորտային միջոցների մաշվածություն

	• Այլընտրանքային ճանապարհների գործարկում (Հյուսիս-հարավ և Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն), որը կհանգեցնի սպառման և ուղևորաշրջանառության նվազման • Սողանքային և այլ վտանգներ ճանապարհների համար
3. Հանրային ենթակառուցվածքներ	
• Համեմատաբար լավ ճանապարհային ցանց • Մայր գազատարի առկայություն Վրաստան-Հայաստան և համայնքների գազիֆիկացման բարձր մակարդակ • Ջրամատակարարման համակարգերը բարելավված են բոլոր քաղաքներում և գյուղերի մեծ մասում • Կոյուղու մաքրման կայանի առկայություն (Դիլիջանում) • Երկաթգծի կայարանի առկայություն (բեռնափոխադրումների հասանելիություն) • Երկաթգծի մինչև Դիլիջան հասնելը • Էլեկտրաէներգիայի և կապի լավ ծածկույթ	• Աղբահանության ցածր մակարդակ և աղբավայրերի սխալ տեղադրում • Բացի Դիլիջանից, կոյուղու մաքրման կայաններ չկան • Գյուղական վայրերում խմելու ջրի ոչ բավարար որակ և քանակ (Սարիգյուղ, Հաղթանակ, Զորական, Դեբետավան, Աճարկուտ, Մովսես, Պառավաքար, Սևքար, Բերքաբեր և այլն) • Գյուղական համայնքներում ոռոգման համակարգերի բացակայություն • Ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճան, մասնավորապես միջպետական, մարզային (տեղական)
	• Հյուսիս-հարավ միջանցքի վրա Ազգային ներդրումների կենտրոնացման պատճառով մարզի տրանսպորտային ցանցի անկում, որը կկրճատի նաև Բագրատաշենի մաքսատան գործառույթները
4. Ներքին արտադրանք և եկամուտներ	
• Ստացվող եկամուտների մեջ գյուղա-տնտեսության զգալի մասնաբաժին • Տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցություն	• Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցածր մակարդակ, 50% • Եկամուտների և արտասահմանից տրանսֆերտների ցածր մակարդակ • Գյուղատնտեսության ցածր արդյունավետություն
• Սահմանամերձ համայնքներին հարկային արտոնությունների տրամադրում • Էժան աշխատուժի առկայություն	• Գյուղատնտեսական նշանակության հողերի ցածր օգտագործում գնդակոծման տակ գտնվելու պատճառով
5. Զբաղվածություն	
• գյուղատնտեսությունում աշխատուժի առկայության և զբաղվածության բարձր մակարդակ • Մեծահասակների վերապատրաստում և վերարակավորում	• Տնտեսապես ակտիվ բնակչության ցածր ցուցանիշ • Ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակ • Երիտասարդների շրջանում

	գործազրկության բարձր մակարդակ • Երկարաժամկետ գործազուրկների, հատկապես երիտասարդների բացառված լինելը աշխատաշուկայից
• Հարկային արտոնությունների և զբաղվածությանն ուղղված այլ ծրագրերի օգտագործմամբ աշխատատեղերի ավելացում	• Երկրում և արտասահմանում տնտեսական պայմանների վատթարացում
6. Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	
• Գյուղատնտեսության զարգացման կայուն միտումներ • Դիվերսիֆիկացված տնտեսություն գլխավոր քաղաքներում և դրանց հարակից տարածքներում (Դիլիջան, Իջևան) հատկապես ծառայությունների մատուցման ոլորտում (կրթություն, տուրիզմ)	• Մարզի տնտեսության կախվածությունը ավանդական գյուղատնտեսությունից • Արդի գյուղատնտեսության մասնագետների պակաս • Գյուղատնտեսության ենթակառուցվածքների՝ մեքենատրանսպորտային պարկերի բացակայությունը, գյուղտեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճան • Արտահանման և ներմուծման ցածր մակարդակ • Դիմակայությանն ուղղված գործողությունների պակաս • Մարզային տնտեսության նոր ճյուղերի (տուրիզմ, կրթություն, արդյունաբերություն) սահմանափակ զարգացվածություն
7. Կրթություն, մարդկային կապիտալ	
• Համընդհանուր անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության մատչելիություն/հասանելիություն • Նախադպրոցական հաստատությունների առկայություն, • Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն • Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն	• ԲՈՒՀ-երի և միջին մասնագիտական կրթության անհամապատասխանություն շուկայի հետ • Մրցունակ կրթությամբ կադրերի և երիտասարդների արտագաղթ • Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների առկայություն
• Մասնագիտական և բարձրագույն կրթության հետագա զարգացում և վերապատրաստումներ ժամանակակից ՏՏ կիրառմամբ	• Բացասական ժողովրդագրական միտումները և սահմանամերձ գոտիներում ոչ կայուն իրավիճակը, որը ազդում է աշակերտների թվի և որակյալ ուսուցիչների հասանելիության վրա • Մրցունակ կրթությամբ կադրերի արտագաղթ
8. Սոցիալական ներառում	

• Բնակարանային ապահովվածության բարձր մակարդակ մեկ շնչի հաշվով՝ 36.4 քմ, հանրապետական միջինը՝ 31.6 քմ • Հիմնական կրթության, առողջապահության և մշակույթի հասանելիություն	• Ծայրահեղ աղքատության բարձր մակարդակ • Գործող մշակութային օջախների քիչ լինելը (62 բնակավայրում 32 մշակույթի տներ կամ ակումբներ) • Բնակֆոնդի մաշվածություն • Աղքատության և երկարաժամկետ գործազրկության պատճառով բնակչության հիմնական մասի կտրված լինելը տնտեսական և սոցիալական կյանքից • Ներմարզային անհամաչափության բարձր մակարդակ հատկապես սահմանային գոտիներում • Բժիշկների քանակի նվազում, մասնագետների ներգրավման համար միջոցների սահմանափակ լինելը
9. Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխություն	
• Մաքուր օդային ավազան • Մեծ ծավալով հատուկ պահպանվող տարածքներ՝ 33031.6 որից <<Դիլիջան>> Ազգային պարկի առկայություն՝ 31982.4 հազ. հա • Անտառային կատեգորիա ունեցող հողեր՝ 113566.7 հազար հա	• Ջրային ռեսուրսների աղտոտում, կոյուղու գործող մաքրման կայանների ոչ բավարար քանակության պատճառով • Կոշտ թափոնների սահմանափակ կառավարում (վերամշակում) • Բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը բնապահպանական խնդիրների հետ կապված • Օբյեկտներում (շենքեր շինություններ, փողոցային լուսավորություն և այլն) էներգախնայողության և էներգաարդունավետության ցածր մակարդակ • վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության (մասնավորապես՝ արևային և հողմային) ցածր մակարդակ
• վերականգնվող էներգիայի օգտագործման հնարավորություն (հիդրո և արևային) • կայուն տուրիզմի զարգացման հնարավորություն • Պրոակտիվ բնապահպանական ծրագրեր կառավարության և դոնոր կազմակերպությունների կողմից • հանրային և բնակելի սեկտորում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների հնարավորություն • վերականգնվող էներգետիկայի ոլորտում	• Կլիմայի փոփոխություններ կամ գլոբալ տաքացում (հողերի դեգրադացիա), անտառներում հրդեհների ռիսկ և ջրային անհավասարակշռություն

միկրոկայանների մասսայականացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորություն • Կլիմայի փոփոխության հարմարվողականության մոդելների ներդրում և ռեպլիկացիա	
10.Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ	
• Լավ կրթված տարածքային վարչակազմ • Տարածքային կառավարման դերակատարների մասնակցության բարձր մակարդակ (հասարակական կազմակերպությունների, գործարարների, ՓՄՁ-ների, ՀԼՄ-ների) • Խոշորացման գործընթացի առաջընթաց	• Մարդկային կարողությունների անհավասարաչափ բաշխվածություն համայնքների միջև • Համայնքային մակարդակներում կարողությունների թերի զարգացում, ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիություն հատկապես փոքր համայնքներում • Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունների ոչ բավարար քանակ
• Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր • Միջազգային կառույցների կողմից աջակցություն ստացած ծրագրեր՝ ուղղված համայնքների, ՀԿ-ների և գործարար միությունների կարողությունների զարգացմանը	
11.Այլ խնդիրներ (Հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներ)	
	• Սահմանամերձ և փոքր համայնքների առկայություն • Գործարանամերձ համայնքների առկայություն (գործարանները չեն աշխատում. Այրում, Ազատամուտ, Կայանավան, Այգեպար)
• Տուրիզմի ներուժ թերզարգացած համայնքների համար • Առկա ծրագրեր, որոնք աջակցում են թույլ տարածքներին	• Սահմանային հակամարտություն Ադրբեջանի հետ

V.ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

141. ՀՀ Տավուշի մարզի տարածքային զարգացման նպատակները և գերակայությունները ուղղված են իրավիճակի և քաղաքականությունների վերլուծության արդյունքում վեր հանված հիմնախնդիրների լուծմանը:

5.1 ՏԵՍԼԱԿԱՆ

142. 2025թ. ՀՀ Տավուշի մարզը կլինի մրցունակ արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ ու զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքներ ունեցող մարզ: Մարզը բոլոր տարածքներում կապահովի համաչափություն և կայունություն:

143. Տարածքային զարգացման քաղաքականության ընդհանուր նպատակը մարզի բոլոր տարածքների (համայնքների) տնտեսական և սոցիալական, տարածքային համաչափ և կայուն զարգացման խթանումն է՝ հաշվի առնելով առանձին տարածքների (համայնքների) կարիքներն ու ռեսուրսները: Նշված ընդհանուր նպատակն ունի երեք բաղադրիչ.

1) առկա ներուժի հիման վրա բոլոր տարածքների մրցունակության բարձրացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած և սահմանամերձ տարածքներին, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա.
2) առավելագույն տարածքային համաչափության երաշխավորում և տնտեսության դիվերսիֆիկացիա.
3) տարածքային զարգացման քաղաքականության և փորձի բարելավում՝ ապահովելով տարածքային ու տեղական դերակատարների ակտիվ մասնակցությունը պլանավորման և իրականացման գործընթացներում:

5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

144. Մարզի ռազմավարական նպատակները, 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը հիմնված են մարզի իրավիճակի գնահատման, ամենամեծ ուժեղ կողմերի և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա, ինչպես ներկայացված է փաստաթղթի վերլուծական մասում:

145. Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունը ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակները /հորիզոնական/ և գերակա թեմաները /ոլորտները, ուղղահայաց/, և դրանք կապված են ազգային ռազմավարական փաստաթղթերին, ինչպես ներկայացված է ստորև:

Աղյուսակ 27. ՀՀ Տավուշի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ.

Տավուշի մարզի զարգացման ռազմավարության նպատակներ	**Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2016-2025**
1. Մինչև 2025 թ. ՀՀ Տավուշի մարզը կբարելավի իր մրցունակությունը և տնտեսության դիվերսիֆիկացիան՝ հասնելով նվազագույնը Հայաստանի միջինի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 60%-ին, կունենա 10%- ային կետով բարձր մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդիկ, քան 2015 թ., 10%-	Բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ (2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակը կաճի առնվազն 10

ային կետով ավելի բարձր ակտիվ կազմակերպություններ և ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղեր, քան 2015 թվականին:	տոկոսով՝ համեմատած 2014թ.-ի հետ
2. Մինչև 2025թ. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվի գործազրկության մակարդակը՝ դառնալով 10%-ից ցածր (համեմատած 2015 թ.12.1%-ի հետ) և աղքատության մակարդակը 25 %-ից ցածր (համեմատած 2015թ. 35.3%-ի հետ): Մարզի սահմանամերձ տարածքները չեն ունենա երկարաժամկետ գործազրկության և աղքատության կրկնակի ավելի բարձր %, քան մարզային միջինը:	Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա: /2025թ. դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել, քան 30%-ը/:
3. Մինչև 2025թ. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվեն տարածքային և տեղական դիմակայուն զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը. մարզային և համայնքային աշխատողների 85%-ը կստանա վերապատրաստման ծրագրեր՝ նվիրված մարզային/տեղական զարգացմանը, մինչ մարզի ամբողջ տարածքը կունենա խոշորացված 7 համայնք 2016թ. 40-ի փոխարեն:	Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով: /2017թ. ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականության իրականացման մեկ ընդհանուր՝ Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա ՏԿԶՆ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով, արտաքին աղբյուրներից բյուջետային աջակցության ստացման համար/:

1. Արդյունաբերության զարգացում՝ հիմնվելով բնական պաշարների և գյուղմթերքների վերամշակման վրա	2. Կայուն զբոսաշրջության զարգացում	3. Ժամանակակից գյուղատնտեսության զարգացում և գյուղական տարածքների բարելավում
ՄԶՌ հիմնական գերակայություններ		
Արդյունաբերության և արտահանման խթանում, զբոսաշրջություն և ՏՀՏ ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում		
Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025թթ.		

5.3.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

146. Ռազմավարական նպատակ 1: Մինչ 2025թ. ՀՀ Տավուշի մարզը կբարելավի իր մրցունակությունը և, տնտեսության դիվերսիֆիկացիան հասցնելով նվազագույնը Հայաստանի միջինի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 60%-ին, կունենա 10%-ային կետով բարձր մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդիկ, քան 2015թ., 10%-ային կետով ավելի բարձր ակտիվ կազմակերպություններ և ոչ գյուղատնտեսական աշխատատեղեր, քան 2015թ.:

147. Հիմնավորում: ՀՀ կառավարության ներկայիս որդեգրած քաղաքականությունը լայն հնարավորություններ է ընձեռում տնտեսության դիվերսիֆիկացման, կազմակերպությունների ակտիվացման, ինչպես նաև նորերի ստեղծման համար: Մարզում առկա են ԵՊՀԻՄ-ը՝ իր չորս ֆակուլտետներով, Երևանի գեղարվեստի ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղը, պետական քոլեջներ բոլոր տարածաշրջաններում, ինչպես նաև Իջևանի մեծահասակների կրթության կենտրոնը: Նպատակը համապատասխանում է ՀՀ 2016-2025թ.թ. ՏԶՌ առաջին և երկրորդ նպատակներին:

148. Ռազմավարական նպատակ 2: Մինչ 2025թ. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվի գործազրկության մակարդակը 2%-ային կետով (համեմատած 2015թ. 2.1% դառնալով) և աղքատության մակարդակը 7%-ային կետով ցածր (համեմատած 2015թ. 35.3%-ի): Մարզի սահմանամերձ տարածքները չեն ունենա երկարաժամկետ գործազրկության և աղքատության կրկնակի ավելի բարձր %, քան մարզային միջինը:

149. Հիմնավորում: Սահմանամերձ համայնքներին տրամադրվող արտոնությունները նպաստում են նոր կազմակերպությունների ստեղծմանը, որի արդյունքում կկրճատվի գործազրկության մակարդակը, կնվազի աղքատ տնտեսությունների թիվը: Նպատակը համապատասխանում է ՀՀ 2016-2025թ.թ. ՏԶՌ երկրորդ նպատակին:

150. Ռազմավարական նպատակ 3: Մինչ 2025թ. ՀՀ Տավուշի մարզում կբարելավվեն տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը՝ մինչ 2025թ. մարզային և համայնքային աշխատողների 85%-ը կստանա վերապատրաստման ծրագրեր՝ նվիրված մարզային (տեղական) զարգացմանը, մինչ 2025թ. մարզի ամբողջ տարածքը կկառավարվի խոշորացված 7 համայնքապետարաններով 2016թ. 40-ի փոխարեն:

151. Հիմնավորում: Տարածքային և տեղական մակարդակներում որոշումների ընդունման և զարգացման պլանավորման ու կառավարման կարողությունները չափազանց կարևոր են տարածքային և տեղական մակարդակում զարգացման և աճի գործընթացներում: Ուստի վերոնշյալ կարողությունների բարելավումը հանդիսանում է Տավուշի ՄԶՌ նպատակ և համահունչ է ՀՀ 2016-2025թ.թ. տարածքային զարգացման ռազմավարության 2-րդ նպատակի հետ:

152. Գերակա խնդիր 1: Արդյունաբերության զարգացում՝ հիմնվելով բնական պաշարների, անտառային ռեսուրսների և գյուղատնտեսական մթերքների վերամշակման վրա:

153. Հիմնավորում: ՀՀ Տավուշի մարզի տնտեսությունն ունի հստակ արտահայտված զարգացման ճյուղեր, որոնց մեջ գերակշռում է վերամշակող արդյունաբերությունը՝ հիմնվելով գյուղատնտեսական մթերքների վերամշակման վրա:

154. Գերակա խնդիր 2: Զբոսաշրջության բոլոր տեսակների զարգացում:

155. Հիմնավորում: Մարզի և, հատկապես, Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ), պատմական և բնական հուշարձանների առկայությունը չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման, միջազգային և ներքին տուրիզմի զարգացման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է բարելավել ենթակառուցվածները, իրականացնել աշխատակիցների վերապատրաստումներ, ստեղծել ինֆորմացիոն տեղեկատվական կենտրոններ, թողարկել բուկլետներ, կազմակերպել մարկետինգային

արշավներ: Այս ամենի նպատակն է բարձրացնել զբոսաշրջիկների հետաքրքրությունը: Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է մարզի հանգստի գոտիներում խթանել զբոսաշրջությունը, մասնավորապես էկոտուրիզմի, ագրոտուրիզմի, էքստրեմալ տուրիզմի, առողջարանային և ձմեռային տուրիզմի զարգացումը:

156. Գերակա խնդիր 3: Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում, գյուղական տարածքների բարելավում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ:

157. Հիմնավորում: Մարզի տարածքի շուրջ 41%-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Գյուղատնտեսության զարգացման գործում հատկապես կարևոր է շեշտը դնել գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման, օրգանական գյուղմթերքների արտադրության, ջերմոցային տնտեսությունների ընդլայնման, տոհմային տնտեսությունների, ինտենսիվ այգիների հիմնման վրա: Ժամանակակից և զարգացած գյուղատնտեսությունը ոչ միայն հնարավորություն է տալիս զարգացնել գյուղական տարածքները, այլ նաև խթան է հանդիսանում գյուղատնտեսության հետ կապված արդյունաբերության ճյուղերի զարգացմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը:

VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

158. Հետևյալ ՄԶՌ գերակայությունները համարվում են հստակ նպաստող ռազմավարական նպատակների իրականացմանը: Կարևորության առումով դրանք գալիս են ավելի վաղ ներկայացված գերակայություններից հետո (գերակա խնդիրներ):

Աղյուսակ 28. ՀՀ Տավուշի մարզի գերակայություններ

Թեմա	Գերակայություն	Հիմնական շահառուներ	Կապը պետական ռազմավարություններին և խոշոր ծրագրերին
Բնական պայմաններ	1. Առկա ռեսուրսների, մասնավորապես հանքային պաշարների և ջրային ռեսուրսների ռացիոնալ և կայուն օգտագործում, աղետների ռիսկի նվազեցում և մարզի դիմակայունության մակարդակի բարձրացում	Մարզի համայնքներ, բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-Բնակլիմայական աղետներից (երաշտ, կարկտահարություն և այլն) վնասների կանխարգելման հայեցակարգի մշակում*
Քաղաքային զարգացում	2. Քաղաքների դիմակայուն զարգացում, քաղաքների կոմունալ ենթակառուցվածքների բարելավում և բնակարանային ֆոնդի արդյունավետ կառավարում	Քաղաքային համայնքներ, բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *-Քաղաքային զարգացման բևեռներ ի հիմնում, բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ* կազմակերպություն *ների*

			թվաքանակի աճ
Տրանսպորտ, հաղորդակցում և տեղեկատվական հասարակություն	**3.** Հանրային տրանսպորտի համակարգի հասանելիության բարելավում	Ակտիվ կազմակերպություններ, բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝
Հանրային ենթակառուց-վածքներ	4. Ճանապարհային ցանցի պայմանների բարելավում 5. Աղբահանության, ջրամատակարարման և կոյուղու համակարգերի բարելավում	Զգազաֆիկացվածհամայնքների բնակչություն, ակտիվ կազմակերպություններ, բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում*
Զբաղվածություն	6. Գործազրկության մակարդակի կրճատում ժամանակակից գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումով	Բնակչություն, Գործազուրկ աշխատունակ բնակչություն և նրանց ընտանիքի անդամներ և ակտիվ կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ *- Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով* ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *-Տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսականֆորմալ զբաղվածների և ակտիվ* կազմակերպություններ*ի թվաքանակի աճ*
Մարզային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	7. Արդյունաբերության զարգացում՝ հիմնվելով բնական պաշարների և գյուղմթերքների	Բնակչություն, տնային տնտեսություններ, ակտիվ կազմակերպությ	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-2018-2020 թ.թ. ընթացքում*

	վերամշակման վրա **(հիմնական գերակայություն)** 8. Կայուն զբոսաշրջության զարգացում **(հիմնական գերակայություն)** 9. ժամանակակից և ադապտիվ գյուղատնտեսության զարգացում և գյուղական տարածքների բարելավում **(հիմնական գերակայություն)**	ուններ	*փարեկան մինչև 100 հա նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար համապատասխան պայմանների ստեղծում* ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-Առնվազն 45 գյուղական համայնքում ավելացված արժեք ապահովող ծրագրերի (ջերմոցներ, սառնարաններ, վերամշակման փոքր արտադրություններ, ապանդանոցներ և այլն) իրականացում:* *-2017թ. սկսած մսի իրացման և գնման գործընթացում պարտադիր սպանդանոցային մորթի փուլային անցում՝ մինչև 2021թ. ամբողջովին սպանդանոցային մորթի անցնելու նպատակով:* ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *-Զբոսաշրջության խթանում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվաքանակի աճ*
Կրթություն, մարդկային կապիտալ	10.Աջակցություն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, գործատու և ուսումնական	Բնակչություն, կրթական, առողջապահական և մշակութային հաստատություններ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *- Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների թվաքանակի աճ*

	հաստատություն կապը զարգացնելու, ինչպես նաև շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու նպատակով 11.Համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում, որը հնարավորություն է ընձեռում անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության 12. 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովում 13.Կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատաշուկայի կարիքներին		
Սոցիալական ներառում	14.Գործազրկության նվազեցում 15.Ընդհանուր աղքատության կրճատում՝ ծայրահեղ աղքատության հաղթահարում	Գործազուրկներ և աշխատանք փնտրողներ, աղքատության շեմից ցածր գտնվող անձինք և նրանց ընտանիքի անդամներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ -*Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ*

			համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա
Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխության հարմարվողականություն «Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրում «Բնության հատուկ պահպանվող տարածքների («Իջևանի անտառային» արգելավայր) ընդլայնում և	16.Բնապահպանություն, էկոհամակարգերի պահպանում 17. Վերականգնվող էներգիայի արտադրության զարգացում և էներգախնայողության խթանում	Բնակչություն, մարզի համայնքներ, զբոսաշրջիկներ, ակտիվ կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի 21-րդ կետով հավանության արժանացած <<ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 49 արձանագրային որոշում՝ *-ՀՀ ողջ տարածքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման՝ ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգի ստեղծում* ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում* ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի 11-րդ կետով հավանության արժանացած ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» N41 արձանագրային որոշում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում»

դրանց կառավարման համակարգերի կատարելագործում»			
Մարզային և տեղական զարգացման կարողություններ	18.Մարզային և համայնքային զարգացման կառավարման կարողությունների բարելավում	Բնակչություն, մարզի համայնքներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ -*Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով*
Այլ հարցեր	19.Սահմանամերձ տարածքների համաչափ զարգացում	Սահմանամերձ տարածքների բնակչություն, համայնքներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում:

VII.ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

159. Ռազմավարական ծրագրերը, որոնք շարունակական են և ակնկալվող, գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների. ռազմավարական կողմնորոշում ՄԶՌ նպատակների և գերակայությունների հետ, արժեք / օգուտ հարաբերակցություն, ծրագրի իրագործելիություն:

Աղյուսակ 29. Տավուշի մարզի ռազմավարական ծրագրեր

N	Ծրագրի անուն /թեմա/	Կարճ նկարագիր	Արժեք	Իրականացնող մարմին	Ժամանակա-հատված	Ստացված բալերը
1.	Դիլիջան համայնքի լուսավորության համակարգի, աղբահանության, ներհամայնքային տրանսպորտային համակարգերի ձևավորման, դպրոցներում բարձր տեխնոլոգիաների գիտելիքների տարածման և բնապահպանական ծրագիր	Դիլիջան համայնքի ենթակառուցվածքների բարելավում, կրթական մակարդակի բարձրացում, բնապահպանական խնդիրների կարգավորում	861.3 մլն.դրամ	ԵՄ (համաձայնությամբ), ՏԶՀ (համաձայնությամբ)	2016 – 2018 թթ.	15
2.	Տավուշտեքստիլ մասնաճյուղի հիմնում (Բերդի տարածաշրջանի Զորաթան և Արծվաբերդ գյուղերում հիմնվել է, Բերդ քաղաքում կհիմնվի 2017թ.) և ընդլայնում	կարի ֆաբրիկայի հիմնում	1 մլրդ. դրամ	մասնավոր ներդրող (համաձայնությամբ)	2015թ. - շարունակական	15
3.	Փոքր ֆերմերական տնտեսությունների զարգացում, գյուղատնտեսական կոոպերատիվների և արժեշխթաների միջոցով	Գյուղական ագրոբիզնեսի ենթակառուցվածքների և համայնքային կազմակերպությունների զարգացում:	500 000 եվրո	ՕՔՍՖԱՄ/ՕքսԵՋԵՆ (համաձայնությամբ)	2016-2018թթ	15
4.	Տավուշի մարզի Ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում	Գյուղատնտեսական կոոպերատիվների կարողությունների զարգացում,	823.0 մլն դրամ	ԵՄ(համաձայնությամբ), ՀՀ Տարածքային Կառավարման և	2017 - 2019թթ.	15

		անասնապահության զարգացում, կաթնամթերքի արտադրություն		Զարգացման նախարարություն, «Քմյունիթի Սենթր ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային զարգացման ՀԿ (նախկին Աջակցություն Նոյեմբերյանին ՀԿ) (համաձայնությամբ)		
5.	Գարեջրի արտադրամասի հիմնում (Ոսկևանում)	Ժամանակակից հոսքագծով գարեջրի արտադրություն սահմանամերձ Ոսկևան համայնքում	ավելի քան 226մլն.դրամ, որից 2016թ.ծախսվել է շուրջ 70 մլն.դրամ	անհատ ներդրող (համաձայնությամբ)	2016թ. - շարունակական	15
6.	Ագրոբազայի ստեղծում Տավուշ համայնքում	Գյուղատնտեսության աջակցություն	48.0 մլն.դրամ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր(համաձայնությամբ)	2017թ.	15
7.	Աջակցություն Դիլիջանին և հարակից բնակավայրերին	Տուրիզմի կենտրոնի հիմնում	656.7 Մլն. դրամ	ԵՄ /ԻԴԵԱ/ հիմնադրամ (համաձայնությամբ)	2017 - 2018թթ.	14
8.	Տնական գինու շշալցման արտադրամասի հիմնում Վ.Կ. Աղբյուրում	Գինու շշալցման արտադրամասի հիմնում, ինչպես նաև կազմակերպել գինու համտես, ցուցադրություն, վաճառք (նախատեսվող ներդրումային ծրագիր)	50 մլն.դրամ	համայնք (համաձայնությամբ), մասնավոր ներդրող (համաձայնությամբ)	2017 - 2018թթ.	14
9.	Սևքարի մրգի վերամշակման արտադրամասի գործարկում	Գյուղական համայնքում աշխատատեղերի ստեղծում (հիմնված արտադրամասը գործարկելու	170.0՝ մլն.դրամ	OXFAM (համաձայնությամբ)	2017թ.	14

		համար ներկայացվել է 35.0 մլն.դրամի ներդրումային ծրագիր)				
10.	1000 քմ ջերմոցի հիմնում	Նոր տեխնոլոգիաներով ելակի արտադրություն և արտահանում (ներկայացված է ներդրումային ծրագիր,Իջևանում)	15.0 մլն. դրամ	Մասնավոր ներդրող (համաձայնությամբ),	2017 – 2018 թթ.	14
11.	Պահածոների արտադրամասի գործարկում Իջևանի տարածաշրջանում	Մրգի և հատապտուղների վերամշակման արտադրամասի գործարկում, որը կառուցվել է 2016թ. (անհրաժեշտ է 51.2 մլն.դրամ գործարկելու համար, ներկայացված է ներդրումային ծրագիր)	121.0 մլն.դրամ	մասնավոր ներդրող(համաձայնությամբ)	2017թ.	14
12.	Ջրամատակարարման համակարգի կառուցում Այգեձոր համայնքում	Ենթակառուցվածքների բարելավում	346.4 մլն. դրամ	IFAD(համաձայնությամբ)	2015 - 2017թթ.	13
13.	Կիրանցի սարամասեր տանող ճանապարհի հիմնանորոգում	Ենթակառուցվածքների բարելավում	67.8 մլն.դրամ	Ֆրանսիայի Հայկական հիմնադրամ(համաձայնությամբ)	2016թ. - շարունակական	13

160.Վերը նշված աղյուսակում նշված ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

161. ՀՀ Տավուշի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության համակարգումը և իրականացումը կատարվելու է մարզային վարչակազմի կողմից՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության խիստ վերահսկողության ներքո, և այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով:

162. Գործնականում ՏԶՌ-ն փաստացի իրականացվելու և/կամ աջակցություն է ստանալու մի շարք կառույցների կողմից.

1. **<u>Մարզային վարչակազմերի կողմից, հիմնականում՝</u>**

ա. ՏԶՌ ամբողջական իրականացման համակարգման միջոցով,

բ. Մարզի ՏԶՌ նախապատրաստման միջոցով՝ մշակում, վերանայում և փոփոխում՝ ըստ պահանջի,

գ. ՏԶՌ իրականացմանն առնչվող գործողությունների համակարգման միջոցով,

դ. ՏԶՌ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման միջոցով,

ե. Բոլոր շահագրգիռ կողմերին ՏԶՌ իրականացման և մարզային զարգացմանն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցով,

զ. Տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, ինչպես նաև ծրագրերի առաջարկների մշակման վերաբերյալ մասնագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

է. Հասարակական միավորումներին և այլ շահագրգիռ կողմերին աջակցության տրամադրման միջոցով՝ տարածքային և տեղական զարգացմանն առնչվող ծրագրերի նախապատրաստման վերաբերյալ,

ը. Տեղական զարգացման և ծրագրերի պլանավորմանն ուղղված միջքաղաքային համագործակցության խրախուսման միջոցով,

թ. Մարզի զարգացման հնարավորությունների խրախուսման միջոցով:

2. **<u>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, հիմնականում՝</u>**

ա. Տարածքային կառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործառույթների իրականացման միջոցով,

բ. Տեղական զարգացման պլանավորման և իրականացման միջոցով,

գ. Ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրերի միջոցով:

3. **<u>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից՝ այլ նախարարությունների հետ համագործակցության միջոցով, հիմնականում՝</u>**

ա. Տարածքային զարգացման ամբողջական քաղաքականության մշակման միջոցով,

բ. Պետության տարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունների հետ համահունչ ՏԶՌ իրականացման վերաբերյալ պատկերացում տրամադրելու միջոցով,

գ. Տարածքային զարգացման խթանման համար միջոցառումների իրականացման միջոցով:

163. **<u>Ի հավելումն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.</u>**

1) Տարածքային զարգացման համար կազմակերպում և համակարգում է ազգային ռազմավարական պլանավորման փաստաթղթերը,

2) ՏԶ պլանավորման փաստաթղթերի համար ապահովում է համապատասխան մեթոդաբանություն,

3) Պատրաստում և ՀՀ կառավարություն է ներկայացնում տարածային զարգացման ռազմավարական և գործառնական փաստաթղթերի իրականացման վերաբերյալ զեկույցները,

4) Կազմակերպում և համակարգում է ՏԶՌ-ների մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ գործողությունները:

164. Դոնորների և միջազգային ֆինանսական կառույցների կողմից, հիմնականում ՏԶՌ իրականացման գործընթացին ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով:

165. Հասարակական կազմակերպությունների կողմից, հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, տարածքային և տեղական ծրագրերի առաջարկման և իրականացման, կենսամակարդակի բարելավմանն և աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկման և այլնի միջոցով:

166. Մասնավոր հատվածի դերակատարների կողմից, հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, իրենց սեփական ներդրումային և ընդլայնման ծրագրերի պլանավորման և իրականացման միջոցով, ինչպես նաև մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջարկման, և տարածաշրջանների նորարարական կարողությունների բարձրացման և օգտագործման միջոցով:

167. Վերոնշյալ շահագրգիռ կողմերից որոշները ուղղակի գործառույթներ կիրականացնեն ՏԶՌ առնչությամբ, որոշների դերը կլինի անուղղակի, այն է՝ հիմնականում կկատարեն իրենց սեփական առաջադրանքները մարզում: ՏԶՌ հաջողության բանալին լինելու է այս բոլոր դերակատարների միջև ամուր համագործակցության և լավ հաղորդակցության ապահովումը:

168. ՏԶՌ արդյունքները կանոնադրության առումով նվազագույն են և հիմնականում առնչվում են որոշակի փոքր ծառայությունների գնմանը (օրինակ՝ գնահատում), ինչպես նաև ներքին մոնիտորինգին, հաշվետվությանը և գնահատմանը, որոնք կարող են իրականացվել ՀՀ Տավուշի մարզպետարանի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով:

IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

169. Տարածքային զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի, և կգնահատվի համաձայն հետևյալ սկզբունքների՝

1) Պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ:
2) ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի մարզի վարչակազմերի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

170. Ստորև թվարկված կատարողական ցուցիչները չափում են ՄԶՌ նպատակներին հասնելը.

1) Մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդկանց թիվը,
2) Ոչ գյուղատնտեսական աշխատատեղերում զբաղված մարդկանց թիվը,
3) ակտիվ կազմակերպությունների թիվը,
4) ուղևորա և բեռնափոխադրումների տևողությունը,
5) գործազրկության մակարդակ,
6) աղքատության մակարդակ,
7) սահմանամերձ տարածքների երկարաժամկետ գործազրկության և աղքատության տեմպեր,
8) մարզային և տեղական վարչակազմերի աշխատակիցների թիվը,
9) մարզային/տեղական զարգացմանը նվիրված վերապատրաստում անցած մարզային և համայնքային աշխատակիցների թիվը,
10) մարզի համայնքների թիվը,
11) մարզում նոր ստեղծված աշխատատեղերի թիվը,
12) մարզի 1000 բնակչի հաշվով բնական հավելաճը,
13) մարզից արտագաղթողների թիվը:

171. Այս ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից, և արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ առաջընթացի զեկույցում:

172. ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչների ցանկը (դրանք չափում են ռազմավարական նպատակներին հասնելը) պետք է մշակվի և ընդգրկվի տեքստում: Այս ցուցիչները պետք է գնահատվեն տարեկան առումով՝ մարզպետարանի կողմից, և արդյունքները ներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ-ների առաջընթացի զեկույցում:

173. ՄԶՌ մոնիտորինգը կհամալրվի մանրամասն մոնիտորինգի համակարգով՝ առաջիկա 2018-2020 թվականների տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրում, և հետագա ՏԶԳԾ հրատարակություններում:

174. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում: Հետևյալ ռիսկերն են հայտնաբերվել ՄԶՌ-ների համար, որոնք արդեն իսկ ինտեգրված են փաստաթղթում, և/կամ կկիրառվեն ՄԶՌ գործընթացի իրականացման ժամանակ:

Աղյուսակ 30. ՀՀ Տավուշի ՄՌ հիմնական ռիսկերը և նվազեցման ուղիները

Ռիսկեր	Ռիսկերի նվազեցման ուղիները
Համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայություն:Փորձառու և որակյալ աշխատակիցների բացակայություն՝ հատկապես համայնքային մակարդակով, որպես պոտենցիալ ռիսկեր, տեղական	Ընթացիկ վերապատրաստում և կարողությունների բարելավման պլանավորում՝ կոորդինացման և մարզպետարանի հմտությունների բարելավման համար, ինչպես նաև իրականացման հմտություններ՝

մակարդակում հաջող իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն ռեսուրսներ և ունակություն վերցնելու նախաձեռնությունը ծրագրի, որը հետաքրքրություն ունի շահագրգիռ կողմերի և այլ տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտներում: Մարզային վարչակազմերի համակարգման ոչ բավարար կարողությունները կարող են լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ գործընթացի համար:	տարածքային և տեղական մակարդակներում:
Առանցքային հարցերի ընկալման բացակայություն՝ մարզային ադմինիստրացիաների և այլ շահագրգիռ կողմերի միջև:	Դասընթաց մարզային վարչակազմի և ՏԶ շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ստեղծվի բանիմաց համայնք՝ ռացիոնալ որոշում կայացնելու համար:
ՄԶՌ կարգավիճակի պարզաբանման բացակայություն և/ կամ /տարբեր իրականացման ընթացակարգեր, և պարտականություններ:	Իրագործելի ծրագրի մշակում, որը ենթակա է քաղաքական բանավեճի: Մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգերի մշակում՝ ՄԶՌ արդյունքների հրապարակման համար:
Անբավարար մոտիվացիան շահագրգիռ կողմերի ներգրավված լինելու: Որոշ դեպքերում որոշ շահագրգիռ կողմեր կարող են բողոքել, որ ծրագրի իրականացման ժամանակացույցը ենթակա չէ քաղաքական բանավեճի, կամ թափանցիկության պակաս կա ողջ գործընթացում:	Ներգրավելով ահագրգիռ կողմերին ՄԶՌ մշակման ամենավաղ փուլում և ամբողջ իրականացման փուլում:
Անարդյունավետ մոնիտորինգ՝ հստակ սահմանված կատարողական ցուցիչների բացակայության պատճառով:	Հստակ սահմանված և չափելի կատարողական ցուցիչներ:
Տարբեր շահագրգիռ խմբերի շահերի խթանում:	Ընդհանուր շահերի նույնականացում շահագրգիռ կողմերի խրախուսում:
ՄԶՌ-ների դերի կարևորության ընկալումը հասարակության կողմից և ինչպես կարելի է այն կապել իրենց առօրյա կյանքին:	Հանրային իրազեկության բարձրացում՝ դարձնելով ՄԶՌ-ն հայտնի փաստաթուղթ ընդհանուր հասարակության շրջանում, և հրապարակել հաջող տարածքային և տեղական ծրագրեր: Հրապարակայնությունը կոնկրետ ծրագրերի և նախաձեռնությունների կապված ՄԶՌ-ին կբարձրացն իիրազեկությունը և կխթանի դրական իմիջ:
ՄԶՌ-ն պետք է կարողանալ մատուցել, թե մարզային, և, թե տեղական մակարդակով: Հաջող ՄԶՌ-ն ապահովում է ճանապարհային քարտեզ մարզի հետագա զարգացման համար, ինչպես նաև ամբողջ վայրերի / համայնքների /համար:	Կառուցել բավարար ճկունություն իրականացման մեջ և թույլ տալ, որ ավելի ցածր մակարդակներում ընդունեն այնպիսի մոտեցում, որը համապատասխանում է իրենց տեղական կարիքներին:

175. ՄԶՌ-ի վերանայում: ՄԶՌ-ի մեծ միջնաժամկետ վերանայումը տեղի կունենա 2021 թվականին (2017-2020թթ. համար) և եթե պայմանները պահանջեն՝ ռազմավարությունը կթարմացվի, կճշգրտվի և կերկարաձգվի: Այս վերանայումը կիրականացվի մարզպետարանի կողմից, սերտորեն կվերահսկվի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման

նախարարության կողմից, որը կապահովի համապատասխան վերանայման մեթոդաբանություն և գործիքներ:

176. ՄԶՌ գնահատում: 2026 թվականին ՄԶՌ-ն կանցնի նախնական գնահատում: Եթե միջոցները հասանելի լինեն՝ կանցնի միջնաժամկետ գնահատում 2021 թվականին, կլինի նաև ՄԶՌ վերանայում: Գնահատումը կընդգրկի առնվազն հետևյալ չափորոշիչները՝

1) Արդյունավետություն: Արդյունավետության վերլուծությունն այն է, թե որքան հաջող է ՄԶՌ-ին հասել իր նպատակներին: **Այն կարելի է գնահատել ըստ հետևյալ հարցերի՝**

ա. որքանո՞վ են իրականացել նպատակները,
բ. որո՞նք են եղել (քանակական և որակական) ազդեցությունները,
գ. որքանո՞վ են նկատված ազդեցությունները համապատասխանում նպատակներին,
դ. որքանո՞վ կարող են այդ փոփոխությունները/ազդեցությունները ներառվել ՄԶՌ-ում,
ե. ի՞նչ գործոններ են ազդել նկատված ձեռքբերումների վրա,
զ. որքանո՞վ են տարբեր գործոններ ազդել նկատված ձեռքբերումների վրա:

2) Արդյունավորություն: Արդյունավորություն է համարվում օգտագործվող ռեսուրսների և փոփոխությունների առաջացած հարաբերությունը: **Բնորոշ հարցեր՝**

ա. որքանո՞վ են ծախսերը արդարացված,
բ. որքանո՞վ են ծախսերը համաչափ առավելությունների հասել,
գ. ի՞նչ գործոններ են ազդում որևէ կոնկրետ անհամապատասխանությունների վրա,
դ. որքանո՞վ է ՄԶՌ-ն եղել արդյունավետ ծախսերի առումով,
ե. կան արդյո՞ք ծախսերի (կամ օգուտների) էական տարբերություններ մարզերի միջև:
զ. ո՞րն է պատճառը:

3) Համընթացություն: Համընթացության գնահատումը ցույց է տալիս, թե որքան լավ են տարբեր գործողություններ միասին աշխատում: **Բնորոշ հարցեր՝**

ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ մարզի այլ ռազմավարական նպատակներին,
բ. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ Հայաստանի զարգացման քաղաքականության հետ:

4) Համապատասխանություն: Համապատասխանությունը ցույց է տալիս հասարակության կարիքների և խնդիրների միջև եղած հարաբերությունը: Կարելի է գնահատել հետևյալ հարցերով՝

ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն դեռ համապատասխան,
բ. որքանո՞վ են նպատակները համապատասխան ՄԶՌ-ին,
գ. որքանո՞վ են նպատակները (դեռ) համապատասխանում մարզի կարիքներին,
դ. որքա՞ն կարևոր է ՄԶՌ-ն մարզի բնակիչների համար:

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

177. Ֆինանսական ռեսուրսներ: ՄԶՌ-ով նախատեսվող ռազմավարական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ պետական և մարզի համայնքների բյուջեների (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի շրջանակներում, որը կստեղծվի 2017թ. և կիրականացվի սկսած 2018թ.), դոնորների և միջազգային ֆինանսական հաստատությունների, ոչ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցները: ՄԶՌ-ի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

178. Մարդկային ռեսուրսներ: ՄԶՌ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցել ժամանակակից և արդյունավետ հանրային կառավարում կամ ինստիտուտների համակարգ, որը միասին կտանի կայուն մարզային զարգացման: Մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման միջև բարելավված համակարգումը, ոլորտների միջև համակարգումը և խորհրդատվությունը նախապայման է կայուն զարգացման համար:

179. Առկա մարզային վարչակազմը ունի՝ 105 աշխատակիցներ՝ որից 99 ունեն բարձրագույն կրթություն (94.2%), իսկ **տեղական կառավարման վարչակազմը** ունի՝ 318 համայնքային ծառայության աշխատակիցներ՝ որից 78 ունեն բարձրագույն կրթություն (24.5%):

180. ՀՀ Տավուշի մարզում իրականացվումէ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ Դիլիջան համայնքի ենթակառուցվածքների բարելավման ծրագիրը, որի արժեքն է 861.3 մլն.դրամ, որը վերջանում է 2018ր թվականին:

181. ՄԶՌ իրականացումը չի պահանջում մեծ տեխնիկական փոփոխություններ կամ ներդրումներ, ինչպես նաև մեծ կազմակերպչական ադապտացիա: ՄԶՌ-ն կարող է իրականացվել առկա ինստիտուցիոնալ և տեխնիկական հագեցվածությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության վերլուծական մասի ավարտից հետո, 2016թ. դեկտեմբերի 21-ին անցկացվեց խորհրդատվություն և քննարկում, որին մասնակցեցին ռազմավարության մշակման ոլորտային խմբերը, միջազգային, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, համայնքների ղեկավարներ, ՓՄՁ-ի և ՋԼՄ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաև ռազմավարության մշակմանն աջակցող Եվրամիության փորձագիտական թիմը ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության մասնագետների ուղեկցությամբ:

http://tavush.mtad.am/files/pics/2016/12/21/30564.jpg

Քննարկումը վարում էր Տավուշի մարզպետի տեղակալ, Տավուշի մարզի ռազմավարության մշակման աշխատանքները համակարգող Լևոն Սարգսյանը: Մարզպետի տեղակալը ողջունեց քննարկման մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց նրանց ներկայության համար՝ կարևորելով ռազմավարության մշակման մասնակցային գործընթացի ապահովումը: Փոխանցելով նաև ՀՀ Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի կողմից տրված հանձնարարականները, առաջարկվեց ամենայն ուշադրությամբ քննարկել արդեն կատարված աշխատանքները՝ վերլուծական մասը, ապա անցնել ՈՒԹՀՍ /SWOT/ վերլուծությանը՝ ռազմավարության ուժեղ և թույլ կողմերի քննարկմանը: Այնուհետև մարզպետարանի աշխատակազմի զարգացմա նծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ Գուրգեն Հարությունյանը ներկայացրեց արդեն մշակված նյութերը: Իրենց դիտողություններով, առաջարկներով և ուղղորդումներով հանդես եկան նաև ԵՄ փորձագիտական թիմի անդամները: Քննարկման ընթացքում ներկայացվեց ռազմավարության առկա իրավիճակը, այնուհետև մասնակիցները կատարեցին ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն: Քննարկման արդյունքները և առաջարկությունները տեղ են գտել ռազմավարության ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծության հատվածում:

2017թ. հունվարի 30-ին մարզի զարգացման ռազմավարության մշակման նպատակով ստեղծված հիմնական աշխատանքային խմբի հետ քննարկվեցին մարզի զարգացման ռազմավարության նպատակները, գերակայությունները և ռազմավարական ծրագրերը, իրականացվեց ռազմավարական ծրագրերի գնահատում:

Ռազմավարության վերջնական տարբերակի ընդունումից հետո կլինեն խորհրդատվություններ նախարարությունների հետ, որին կհաջորդի ՄԶՌ-ների հաստատումը ՀՀ կառավարության կողմից: